ՈՒզում եմ ասել, որ առնվազն բանակցություններ էլ տեղի չեն ունեցել, եւ հետո՝ իշխանության դեմ պայքարը միայն հայտարարություններով չէ: Եթե մենք հայտարարություններին չենք միանում, չի նշանակում, որ պայքարի մեջ չենք: Ով որտեղ պայքարելու հնարավորություն է տեսնում, պայքարում է՝ իր գաղափարներին համահունչ:

Կարդացեք՝ էջ 4

Ասում են, թե բա ոնց կարելի է. դրանով դուք լեգիտիմացնում եք ոչ օրինական՝ կեղծված ընտրությունները, ինչու չկա փողոցային պայքար, պայմանական՝ Ազգային պալատի գրավում՝ հեղափոխություն, մենք դրա համար էինք ձեզ ձայն տվել, որ դուք պատգամավոր աշխատեք, մենք ձայն ենք տվել, որ դուք իշխանափոխություն անեք:

Կարդացեք՝ էջ 5

ԵՄ դրոշները լավ են: «Իվանիշվիլին պետք է հեռանա» կարգախոսը հասկանալի է: Բայց պետությունը չի կարող կառուցվել դրոշների եւ 1 կարգախոսի վրա: Ենթադրենք՝ Իվանիշվիլին վաղը հեռանում է: Ո՞վ է կառավարում երկիրը հաջորդ օրը: Ի՞նչ տնտեսական ծրագիր կա: Ինչպե՞ս ենք վերականգնելու հարաբերությունները ԵՄ-ի հետ:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 111 (4246), 7 հուլիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Հեռացող նախագահ Ալեն Սիմոնյանը, Սահմանադրության օրվա առթիվ, մեկ աշխատավարձի չափով պարգեւատրել է պատգամավորներին ու աշխատակազմին, սակայն ՔՊ-ական պատգամավորները, պարզվում է, ավելի մեծ ախորժակ են ունեցել: Նրանք ակնկալել են, որ, որպես հեռացող խորհրդարանի պատգամավորներ, կլորիկ գումարներ կստանան մոտ օրերս, ինչպես անցած տարեվերջին ստացան, երբ յուրաքանչյուր պատգամավորի 3-ական միլիոն դրամ պարգեւավճար փոխանցվեց: Հիշեցնենք, որ մի քանի անգամ ավել գումարներ կառավարության անդամները ստացան: Ի դեպ, տեղեկացանք, որ «Հայաստան» դաշինքի պատգամավորները դիմել են ՍԴ՝ վերջին օրվա արտահերթ նիստում ընդունված օրենքի հակասահմանադրականության հարցով: Խոսքը դրսում ապրող մեր հայրենակիցներին ընտրության իրավունքից զրկելու մասին է՝ ընտրությունից մեկ տարի առաջ ընտրողն առնվազն վեց ամիս պետք է Հայաստանում գտնված լինի:

«ՈՒժեղ Հայաստանում» վստահ են, որ իրենց վնասել է Ռուսաստանի հետ ասոցացվելը. հակառուսական տրամադրությունները տարածվել են նաեւ իրենց վրա եւ ազդել ընտրությունների արդյունքների վրա: Ապրիլի 1-ին Մոսկվայում Վլադիմիր Պուտինի հայտնի հայտարարությունն էլ է իրենց մեծապես վնասել: Պուտինն ասել էր. «Կան բազմաթիվ քաղաքական ուժեր, որոնք ռուսամետ դիրքորոշում ունեն… Մենք շատ կցանկանայինք, որ այդ բոլոր քաղաքական կուսակցությունները, գործիչները կարողանային մասնակցել ներքաղաքական աշխատանքին՝ ընտրությունների ընթացքում»: Ըստ հարցումների, մինչ Պուտինի այդ հայտարարությունը մեր հանրության ընդամենը 13 տոկոսն էր Ռուսաստանի հետ կապում Սամվել Կարապետյանին, իսկ հայտարարությունից հետո՝ մոտ 55 տոկոսը:

Հունիսի 7-ին ԱԺ ընտրություններում տարած իրենց վիճահարույց հաղթանակը «Քաղպայմանագիր» կուսակցությունը Տավուշի մարզում նշել է 4 մեծ քեֆ-ուրախությամբ: Այդ քեֆերը կազմակերպվել են մարզի համայնքներից յուրաքանչյուրում՝ Իջեւանում, Նոյեմբերյանում, Դիլիջանում, Բերդում: ՔՊ կուսակցության մեր աղբյուրը հայտնեց, որ խնջույքների կազմակերպումը համակարգել է Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը:

Մանր վրեժ

Գագիկ Ծառուկյանի հանդեպ Նիկոլ Փաշինյանի իշխանության ձեռնարկած հարձակումն առաջինը չէ: Շատերը հիշում են 2015 թվականի դեպքերը, երբ փետրվարի 12-ին Սերժ Սարգսյանը, հանդես գալով ՀՀԿ խորհրդի նիստում, Ծառուկյանին կոչեց չարիք եւ հայտարարեց, որ նա պետք է դուրս գա քաղաքականությունից: Նույն օրը ԱԱԾ սպեցնազը շրջափակեց Ծառուկյանի տունը, իսկ ՀՀԿ վերնախավը, իրար հերթ չտալով, վիրավորում էին նրան, ապա ստուգումներ սկսվեցին նրա ընկերություններում: Այնպես որ, պատմությունը կրկնվում է, եւ ձեռագիրն էլ նույնն է, ուղղակի այն ժամանակ ընտրության հնարավորություն էին տալիս իրենց «թիրախին»՝ պայքարել ու նստել կամ դուրս գալ քաղաքականությունից եւ շարունակել բիզնեսով զբաղվել: Փաշինյանն այլընտրանք չի առաջարկում եւ քաղաքական հետապնդումներն էլ քողարկված չի անում, այլ՝ բացահայտորեն, իրավապահ համակարգը դաժանաբար շահագործելով, Ծառուկյանի ողջ բիզնես կայսրությունը փլուզելով: Նա, որ ամբողջ օրը համակարգչի առաջ քարոզում է հարկերը վճարել եւ անգամ 100 դրամանոց ապրանքի ՀԴՄ կտրոնը պահանջել, որ տնտեսվարողները հարկերը չթաքցնեն՝ վճարեն, իր իսկ հրահանգով՝ ոչնչացնում է ամենախոշոր հարկատուներից մեկին եւ բյուջեն զրկում է միլիարդների հարկերից: Իր քմահաճույքների ու վրեժխնդրության հողի վրա՝ հազարավոր մարդկանց աշխատատեղ է փակում, ապրուստի միջոցներից զրկում: Այսպիսի անթաքույց հակապետական գործունեություն՝ հենց առաջին դեմքի կողմից, երեւի մարդկության պատմությունը դեռ չի տեսել: Իսկ ո՞րն է Ծառուկյանի մեղքը: Այո, նա համարձակվել է մասնակցել խորհրդարանական ընտրություններին: Բայց կարծում եմ՝ էականը նրա արտահայտությունն էր. «Եթե ապացուցվի՝ շպիոն եմ, թող ինձ գնդակահարեն, եթե՝ ոչ, ասողը թող գա, իմ որձ առյուծների վանդակը մտնի»:

2024 թվականին սահմանազատման անվան տակ, միակողմանի կերպով Ադրբեջանին հանձնվեցին Կիրանց գյուղից շուրջ 15 հեկտար տարածք, Կիրանց-Բաղանիս հատվածում շուրջ 30 տարի ամրացված պաշտպանական դիրքեր, Բերքաբեր գյուղի մոտակա դիրքերը: Սահմանազատումով Ոսկեպար-Բաղանիս հատվածում՝ Ադրբեջանին հանձնված նախկին պաշտպանական դիրքում ներկայում ադրբեջանական հենակետ է կառուցվել, եւ միջպետական ավտոճանապարհի դեմ-դիմաց վերջերս տեղադրվել է Ադրբեջանի մեծ դրոշը: Այն հոգեբանական ծանր ազդեցություն է թողնում Հայաստան-Վրաստան ճանապարհի այդ հատվածով երթեւեկողների վրա:

ՓՈՏՐՈՒՔԻ ՄԵՋ ԵՆ

Արցախի Ազգային ժողովում «մանթրաշ» վիճակ է, պատգամավորները չեն կողմնորոշվում ինչ անել՝ նորից ԱԺ նախագահ ընտրել, թե ձեռնպահ մնալ՝ դրանով ակամայից ջուր լցնելով Փաշինյանի ջրաղացին, որը հետեւողականորեն ոչնչացնում է այս ինստիտուտը: Մեզ ասացին, որ վերջին օրերին ակտիվ քննարկումներ են, Աշոտ Դանիելյանի անսպասելի հրաժարականից հետո բոլորը շոկի մեջ են: ԱԺ նախագահի ժամանակավոր պաշտոնակատարը Գագիկ Բաղունցն է, ԱԺ նոր նախագահի ընտրության համար 17 պատգամավորի կողմ քվե է պետք, ինչն ապահովել հնարավոր չէ: Հուլիսի 2-ին, հիշեցնենք, Աշոտ Դանիելյանը հայտարարեց, որ որոշում է կայացրել հրաժարվել Արցախի Հանրապետության ԱԺ նախագահի պաշտոնից: Ըստ Արցախի սահմանադրության՝ Դանիելյանը նաեւ Արցախի նախագահի պարտականություններն էր կատարում, քանի որ Արցախի ԱԺ խմբակցություններն Արցախի նախագահի թեկնածու չէին առաջադրել 2025-ին: Նրա հրաժարականի պատճառն «Արցախֆրուտ» ՓԲԸ-ին առնչվող դրամական միջոցների շարժն է: Աշոտ Դանիելյանը հայտնել է, որ «Արցախֆրուտ» ՓԲԸ-ից որոշակի դրամական միջոցներ փոխանցվել են իրեն՝ որպես ԱԺ նախագահի, բացառապես պաշտոնեական գործունեության ապահովման եւ դրանից բխող ծախսերի իրականացման նպատակով: Այդ միջոցները չեն հանդիսացել անձնական եկամուտ եւ տնօրինվել են Արցախի Հանրապետության պետական ու հանրային շահերից բխող խնդիրների լուծման համար: Առայժմ որեւէ թեկնածուի անուն չկա, մեր աղբյուրի խոսքով՝ դժվար է լինելու ինչ-որ մեկին համոզել, քանի որ ով համաձայնի, կհայտնվի Փաշինյանի թիրախում:

ԲՐԿ

ԲԱՌԱՊԱՇԱՐՆ ՈՒ ՔԱՅԼԵՐԸ ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԻԿՏԱՏՈՐՆԵՐԻՆ ԵՆ ՀԻՇԵՑՆՈՒՄ

Ենք ապրում ենք մի երկրում, որտեղ վարչապետի աթոռը զավթած անձը եւ դատախազ է, եւ դատավոր է, եւ ոստիկան է, եւ քննիչ: Նա զբաղվում է տառացիորեն ամեն ինչով, բացի վարչապետի բուն գործառույթներից: Նախընտրական քարոզարշավի ժամանակ, ինչ-որ պահից նրա խոսույթը դարձավ անթույլատրելի, նա վիրավորում, անպատվում էր արցախցիներին, իրեն հակադրվող քաղաքացիներին, նորից վերադարձել էր 2018-21 թվականների լեքսիկոնին՝ սպառնում էր ընտրություններին առաջադրված իր քաղաքական երեք հակառակորդներին «կզացնել», «բոմժ սարքել», նստացնել՝ այնպես, որ նրանք տասնյակ տարիներ լինեն բանտում: Պարզ չէր, թե ինչ մեղադրանքներով, պարզ չէր, թե ինչպես կարող է երկրի գործադիր իշխանության ղեկավարն այդքան խախտել Սահմանադրությունն ու ներխուժել իրավապահ համակարգի տիրույթ: Նրա միակ վախը եվրոպաներից է, իսկ Եվրոպան, պարզվեց՝ կույր է ու խուլ, չի տեսնում այս աղաղակող ապօրինությունները եւ խախտումները, որոնց շնորհիվ նա կրկին իշխանություն զավթեց:

Դեռ նախընտրական փուլում, անգամ ընտրությունների օրը եւ հատկապես ընտրություններից հետո գրեթե ամեն օր, վաղ առավոտյան իրավապահները ներխուժում են այս կամ այն ընդդիմադիր գործչի տուն, խուզարկություններ անում, անձանց հարցաքննության տանում, ձերբակալում, կալանավորում եւ այլն:

ԱԱԾ-ի դիմակավորված եւ զինված անձինք երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 7-ից ներխուժել էին Գագիկ Ծառուկյանի տուն, արգելափակել մուտքը, փաստաբաններին մեկ ժամ չէին կարողացել մուտք գործել իրենց վստահորդի մոտ, որ մասնակցեն խուզարկություն քննչական գործողությանը: Սա էլ է օրենքի կոպիտ ոտնահարում, որը եվրոպական որեւէ երկրում բավարար կլիներ, որ հետապնդումը դադարեցվեր, եւ խախտումը թույլ տված անձինք խստիվ պատժվեին:

Երեկ իրավապահները միաժամանակ ներխուժել էին «Մուլտի գրուպ» կոնցեռնի գրեթե բոլոր ձեռնարկությունները, դրանց տնօրենների տները, լայնածավալ խուզարկություններ էին իրականացնում, ամենուր դադարեցրել էին ընկերությունների աշխատանքը, մարդկանց հանել էին շենքերից եւ անգամ Օլիմպավանից մարզիկներին էին հանել, այդ թվում՝ արտասահմանցի:

Մեկ տասնյակից ավելի ընկերությունների մասին է խոսքը՝ «Արարատցեմենտ», Երեւանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատ, «Մուլտի վելնես» համալիր, Օլիմպավան, «Մուլտի ստոուն» ընկերություն, Ծաղկաձորի «Մուլտի գրանդ» հյուրանոցային համալիր եւ բազմաթիվ այլ հիմնարկներ: Մինչ շատերը Փաշինյանի այս գործողությունները համեմատում են 1937 թվականի իրադարձությունների հետ, քաղաքագետ **Սուրեն Զոլյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով վերջին դեպքերին, նկատում է. «1937 թվականն ուներ իր պատճառները, խնդիրները, սակայն Նիկոլ Փաշինյանի գործողությունները, իրականում, շատ մանր են, բացառապես անձնական շահերից ելնելով՝ իշխանությունը պահելու համար: 37 թվականին այլ մասշտաբների պայքար էր, մեծ տեռոր էր այն ժամանակ, Հայաստանի այսօրվա դեպքերն ինձ հիշեցնում են Լատինական Ամերիկայի փոքր երկրներում տիրող դիկտատուրաները, որոնց խնդիրը եւս բացառապես իշխանության պահպանումն էր: Նիկոլ Փաշինյանն ամեն անգամ հերթական կարմիր գծերն է հատում: Այս մարդու հայտարարությունները, նրա բառապաշարը փոքրիկ երկրների դիկտատորներին են հիշեցնում: Նրանք նույնպես տիեզերական խոստումներ էին տալիս, մեծ ծրագրերի մասին աղաղակում եւ անպայման փնտրում էին ներքին ու արտաքին թշնամիներ: Մեզանում նույնպես բոլոր այն ուժերը, ովքեր իրենցից ինչ-ինչ վտանգներ են ներկայացնում, չեզոքացվում են: Ստացվել է այնպես, որ Հայաստանում գրեթե չկա միջին խավ, բնակչության մեծ մասն աղքատ է եւ քաղաքական գործոն չէ, մնում է միայն խոշոր կապիտալը, ուստի Նիկոլ Փաշինյանի հիմնական թիրախը հարուստ մարդիկ են, իր լեզվով ասած՝ «թալանչիները», ովքեր հանդգնել են քաղաքականությամբ զբաղվել: Նրանք, ովքեր քաղաքականությամբ չեն զբաղվում, անտարբեր են երկրում տիրող սարսափելի պրոցեսների նկատմամբ, մուծվում են համապատասխան հիմնադրամներին, իրենցից որեւէ վտանգ չեն ներկայացնում: Իսկ նրանք, ովքեր պայքարում են, ուրեմն հանցագործ են, թալանչի են եւ պետք է պատժվեն: Սա էլ շատ նման է ֆեոդալական հպատակությանը: Ինչո՞ւ. որովհետեւ Փաշինյանն այսպիսի քայլերով ոչ միայն ֆինանսական խնդիրներ է լուծում, այլեւ փորձում է քաղաքական հակառակորդներին հնազանդեցնել: Այն, ինչ սպասվում է մեզ, շատ տխուր է: Եթե չեզոքացվեն բոլոր նրանք, ովքեր կարծիք ունեն, դրան էլ գումարվեն այս նոր ընտրական սահմանափակումները, եւ Հայաստան ներմուծվեն 300 հազար այլ ընտրողներ, Հայաստանը որպես պետություն կդադարի գոյություն ունենալ»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Իմիջը խանգարեց

Որքան էլ ՔՊ-ում ձեւացնում են, որ թքած ունեն թիմակիցների աղմկահարույց արարքների, բարոյական նկարագրի վրա, պարզվում է, ոմանց դեպքում որոշ փաստեր որոշիչ դեր են խաղացել: Մեզ պատմեցին, որ ՔՊ վարչության նիստում քննարկման թեմա է դարձել խմբակցության ներկայիս քարտուղար Արթուր Հովհաննիսյանի վարկանիշը, մասնավորապես՝ թմրանյութի հայտնի պատմությունը: Արձանագրել են, որ հնարավոր չի եղել հետագա վարքով ու քարոզչությամբ նրա անձի՝ հանրության շրջանում առկա բացասական ընկալումը փոխել: Մյուս դեպքերում եւս ոմանց անձնական կյանքի կամ անբռնազբոս պահվածքի պատմություններն են դեր խաղացել: Իհարկե, այս հարցում ՔՊ վարչությունն առաջնորդվում է Նիկոլ Փաշինյանի սուբյեկտիվ ընկալումներով: ՔՊ-ում, օրինակ, զարմանում են, թե ինչպես է նա խաղաղ վերաբերվում այսօր թմրանյութեր հայտնի ու բացահայտ օգտագործողներին, իսկ ինչ-որ մեկի հին պատմությունը չի կարողանում ներել, կամ՝ իր ընտանեկան կարգավիճակը հստակեցված չէ, բայց մյուսներից իդեալական ընտանեկան հարաբերություններ է ակնկալում: Մի բան են հասկացել, որ ինքը որոշել է հանրության աչքում հնարավորինս քիչ վարկաբեկված անձանց առաջին պլան բերել, բայց այստեղ էլ շատ կասկածելի չափանիշներ են գործում՝ գոնե ԱԺ ներկայիս կազմն ուսումնասիրողը դա անմիջապես կնկատի:

ԻՆՉ Է ՏԵՍՆՈՒՄ ԵՎ ԻՆՉ ՉԻ ՏԵՍՆՈՒՄ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԻ ԱՓԻՆ

ՀՀ գլխավոր դատախազությունը միջնորդագիր է ներկայացրել «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ Լավանդայի Արայիկի՝ ԱԺ նախկին պատգամավոր Արայիկ Հայրապետյանի հետ 2004 թվականին 3100 քմ ափամերձ տարածքի վարձակալության շուրջ կնքված պայմանագիրը լուծելու վերաբերյալ:

Արայիկ Հայրապետյանը միակը չէ: 18 թվից հետո ու հատկապես 2025-2026 թվականներին, իրավապահ մարմինները Սեւանի ափամերձ տարածքների ապօրինի շինությունների քանդման եւ հողերի վերադարձի լայնածավալ գործընթաց են սկսել, որի շրջանակներում թիրախավորել են մի շարք նախկին բարձրաստիճան պաշտոնյաների եւ հայտնի գործարարների:

2025 թվականի վերջին նմանատիպ պրոցես եւ ապամոնտաժում սկսվեց «Հարսնաքարում», որը պատկանում է Նեմեց Ռուբոյին՝ Ռուբեն Հայրապետյանին: Այս գույքերը քննվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով:

2020 թվականին սկսեցին ապամոնտաժել նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի առանձնատունը: Այս տարվա փետրվարին քանդեցին ԿԳ նախկին նախարար, ՀՀԿ-ական Արմեն Աշոտյանի եղբորը պատկանող շինությունները, որոնք կառուցված էին ջրածածկման ենթակա գոտում: Քանդեցին Սեյրան Օհանյանի տունը: Պարբերաբար դատախազության ուսումնասիրությունների կենտրոնում են հայտնվում Գագիկ Ծառուկյանին պատկանող ընդարձակ հանգստյան գոտիները եւ Սեւանի ափին գտնվող հողատարածքները: Դատախազության եւ շրջակա միջավայրի նախարարության տվյալներով՝ միայն վերջին ամիսների ընթացքում Սեւանի ափամերձ գոտում ապամոնտաժվել է 162 ապօրինի շենք-շինություն: Դրանց մեծ մասը փոքրիկ շինություններ, դոմիկներ, ծածկեր են, իհարկե: Բայց պետությունը հայտարարել է, որ ոչ մի «հայտնի անուն» կամ նախկին արտոնություն չի փրկելու այս տարածքի սեփականատերերին:

Բայց, ինչպես տեսնում ենք, նիկոլական իշխանությունը խլում է բացառապես նախկիններին պատկանող գույքը եւ չի ցանկանում նկատել ՔՊ-ականների ու նրանց հետ փոխկապակցված անձանց թանկարժեք գույքերն ու հանգստի գոտիները, որոնք կառուցվում են կամ կան Սեւանի ափին: Օրինակ, Սարգսյանների ընտանիքին է պատկանում Սեւանի ամենահայտնի եւ շքեղ հանգստյան գոտիներից մեկը՝ «Սպիտակ Շորժա» (White Shorzha) լողափը: Զարեհ Սարգսյանը եւ նրա որդիները մինչեւ վերջերս Նիկոլ Փաշինյանի ամենամերձավորների թվում էին, բայց այժմ նրանք պաշտոն չեն զբաղեցնում, Հայկ Սարգսյանն էլ չընդգրկվեց պատգամավորության թեկնածուների ցուցակում: Այս լողափը իշխանափոխությունից հետո դարձավ ՔՊ-ական պաշտոնյաների ամենասիրելի ժամանցի վայրերից մեկը, թեեւ լողափի հողատարածքների եւ կառույցների օրինականության վերաբերյալ մամուլում եւ բնապահպանների կողմից բազմիցս հարցեր են բարձրացվել:

Սեւանի ափին կառուցված նոր, շքեղագույն դղյակ-առանձնատունի Արցախի քաղաքաշինության նախկին նախարարի որդին, պետական միլիարդավոր դրամների տենդերներ շահող «Կապավոր» ընկերության ղեկավար Արման Հակոբջանյանը: Նա ՔՊ-ի սրտի օլիգարխների շարքին է դասվում: Սեւանի ափին, Դրախտիկում նա մեծ դղյակ է կառուցել: Ըստ տարբեր ԶԼՄ-ներում տեղ գտած տվյալների՝ շինարարությունն իրականացվել է բնապահպանական շիններմերի խախտումներով, սակայն շրջակա միջավայրի նախարարությունն աչք է փակել դրա վրա:

Եվ, ի վերջո, հիշենք Նիկոլի «լայվ» խորովածը, որը նա Չինաստանից ժամանող Աննային սպասելիս պատրաստում էր Սեւանի թերակղզում գտնվող պետական ամառանոցների համալիրում: Այս համալիրը պաշտոնապես նրա սեփականությունը չէ՝ պատկանում է պետությանը, բայց իշխանափոխությունից հետո այնտեղ կատարվել են միլիոնավոր դրամների շքեղ վերանորոգումներ: Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ական վերնախավը պարբերաբար օգտվում են այս տարածքից եւ հենց Սեւանի ափին կազմակերպում իրենց փակ խնջույքներն ու կուսակցական հավաքները:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՍՅՈՒ

ՄՈՍԿՎԱՆ ԿՀԱՎԱՏԱ՞Ր ՓԱՇԻՆՅԱՆԻ «ԱՐՑՈՒՆՔՆԵՐԻՆ»

Նիկոլ Փաշինյանի «ինքնիշխան» ու անկախ լինելն այս անգամ էլ ընդամենը մի քանի ամիս տեւեց: Հավանաբար, հասկանալով իր հերթական անհեռանկար գործողությունների վնասարար հետեւանքները, երեկ նա կրկին բռնեց Ռուսաստանի ճամփան: Բայց ոչ թե բարձր մակարդակի պաշտոնական այցով, որի ժամանակ Ռուսաստանի նախագահի հետ կհանդիպեր, այլ Innoprom-2026 ցուցահանդեսի ֆորմատով Եկատերինբուրգում վարչապետների մակարդակով հանդիպման: Երկու օր առաջ հայտնի դարձավ, որ հայկական կողմի խնդրանքով տեղի է ունեցել Միշուստին-Փաշինյան հեռախոսազրույց: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այդ հեռախոսազրույցին նախորդել են Հայաստանի արտաքին գործերի նախարարության խողովակներով փոխանցված խնդրանք-նամակները, որ Փաշինյանին հրավիրեն՝ մասնակցելու միջազգային արդյունաբերական ցուցահանդեսին, որը համարվում է բավական երկրորդական եւ առանձնապես աչքի չընկնող մի միջոցառում: Ընդ որում, ապրիլին նախարարի մակարդակով ստացված պաշտոնական հրավերներից բացի, նաեւ ավելի դետալացված հրավեր պետք է ուղարկվեր, իսկ ապրիլից ի վեր իրավիճակ է փոխվել: Հայաստանը հայտնվել է ռուսական սանկցիաների տակ, փաշինյանական պաշտոնյաներն էլ, իրավիճակը հարթելու փոխարեն, այս ամիսներին միայն խրոխտ հայտարարություններ են արել, որ այլընտրանքային շուկա են գտել հայ տնտեսվարողների, ֆերմերների համար՝ ի դեմս եվրոպական, թուրքական, լեհական եւ այլ շուկաների:

Մինչդեռ գնալով իրավիճակը սրվում է, գյուղատնտեսության սեզոնը նոր է ակտիվանում, ինչն ըստ էության հասկանալով՝ Փաշինյանը խնդրագրեր է ուղարկել ռուսաց թագավորին, որ գնա բանակցի՝ հարցը կարգավորի, եւ չի մերժվել, ինչպես մեր աղբյուրներն են ասում, Ռուսաստանում շատ զարմացել են նրա պահվածքից, չէ՞ որ ընդամենը մի քանի օր առաջ են Հայաստանից մեկնել Ուրսուլա ֆոն դեր Լայենն ու Մարթա Կոսը: Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայաստանյան այցի ժամանակ ճոխ ֆինանսատնտեսական աջակցություն եւ եվրոպական շուկաների լայն գիրկ խոստացավ, որը, փաստորեն, Փաշինյանին չի մխիթարել, եւ նա որոշել է նորից ռուսների գիրկը նետվել: Ռուսները զարմացել են Փաշինյանի խնդրանքներից, բայց չեն մերժել, համաձայնել են ընդունել ու հասկանալ, թե ինչ կա նրա մտքին:

Փաշինյանին օդանավակայանում դիմավորել են ՌԴ ԱԳՆ պետական արարողակարգի վարչության պետի տեղակալը, ինչպես նաեւ՝ Սվերդլովի փոխնահանգապետ Կոզլովը եւ տեղական այլ պաշտոնյաներ: Այսինքն, ոչ մի նշանակալի դեմք չի գնացել օդանավակայան, վարչապետական ընդունելության չեն արժանացրել, թեեւ աղուհացով են դիմավորել:

«Վստահ եմ, որ գնացել է խնդրելու եւ դեպի Մոսկվա վերադարձի ճանապարհներ փնտրելու: Ես մեկ անգամ չեմ ասել, որ Փաշինյանի քաղաքականությունը հետեւյալի մասին է՝ երկու քայլ ընդդեմ Ռուսաստանի, մեկ քայլ դեպի Ռուսաստան, ու այդպես ութ տարի շարունակ նա քանի-քանի քայլ հեռացրել է հայ-ռուսական հարաբերությունները»,- մեզ հետ զրույցում ասաց ՀՀԿ-ական **Էդուարդ Շարմազանովը**: Խնդիրն այն է, որ Ռուսաստանից Հայաստանի տնտեսության կախվածությունը զգալիորեն մեծ է, եւ, Շարմազանովի խոսքով, եթե Հայաստանը զրկվի ԵԱՏՄ շուկայից, դա ոչ միայն Հայաստանն է սոցիալական կոլապսի հանգեցնելու, այլեւ իր իշխանության դեմ է սոցիալական ընդվզում լինելու. «Փաշինյանը հասկանում է այդ ամենը, ինչքան էլ Ֆոն դեր Լայենը գա ասի՝ այսքան փող կդնենք, կդիվերսիֆիկացնենք, բայց ակնհայտ է, որ մեծ խնդիր է լինելու: Կամ՝ որ ասում են. Հայաստանն ուրիշ երկրից գազ կներկրի… որտեղի՞ց է բերելու, ամենաէժան հաշվարկով անգամ իր սիրելի Ադրբեջանից 3-5 տարի է պահանջվելու, որ այդ հարցերը լուծեն, էլ չենք խոսում դրա բարոյական կողմի մասին եւ այն մասին, որ Հայաստանը դնելու են Ադրբեջանից էներգետիկ կախվածության մեջ: Հիմա փորձ է անում՝ մեկ քայլ կրկին վերադարձի, եւ ուզում է ասել, որ իմ հետ աշխատեք»:

Շարմազանովը նշեց նաեւ, որ անհերքելի է փաստը՝ Փաշինյանի «սիրտը Եվրոպա է ուզում», եւ ինքն էլ այդ ուղղությամբ է գնում, միեւնույն ժամանակ հասկանում է, որ օդուշրի պես Հայաստանին հարկավոր է ԵԱՏՄ-ն, դրան այլընտրանք չկա. «Ինչքան էլ ուզում են արեւմտամետները լոլոներ կանչեն, ԵԱՏՄ-ի տված հնարավորություններն անփոխարինելի են»: Արդյոք ՌԴ-ում հերթական անգամ կներե՞ն «անառակ որդուն», թե՞ նորից նրան կոշտ ընտրության առջեւ կդնեն, Շարմազանովը չի կարող ասել: Միայն մի բան գիտի, որ հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններ վաղուց այլեւս չկան. «Նայեք՝ ՀՀ-ում ՌԴ դեսպանը քանի անգամ է կանչվել ՀՀ ԱԳՆ, տարբեր պաշտոնյաների միջեւ փոխհրաձգություն է եղել, անգամ ընդդիմությանը վիրավորելու համար իշխանականները «ռուսի ագենտ» են ասում: Հենց նաեւ այս պատճառով եմ ասում, որ չգիտեմ, թե Ռուսաստանում ինչ կարող են Փաշինյանի հետ պայմանավորվել, կամ-կամ է լինելու, թե՞ Փաշինյանը հավաստիացնելու է, որ ԵՄ չի գնում: Անձամբ իր շահերից էլ է բխում, որ Հայաստանն այսօր մնա ԵԱՏՄ լիիրավ անդամ: Իհարկե, մենք բաց աղբյուրների ինֆորմացիայով ենք գնահատականներ տալիս, բայց չգիտենք՝ կուլուարներում ինչ է կատարվում, մի քանի օրից գուցե հասկանանք, բայց ես չեմ կարծում, որ Մոսկվան արցունքներին կհավատա, մյուս կողմից՝ պետք է հասկանալ նաեւ, թե ինչ է Մոսկվայի ուզածը»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՊԱՅՔԱՐԻ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԼՈՒՐՋ ԱՌԻԹՆԵՐ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ

Վերջին օրերին ամենաակտուալ դիսկուրսը մանդատների թեման է՝ վերցնել, թե չվերցնել: Արմատական տրամադրված զանգվածը դեմ է ընդդիմության կողմից մանդատները վերցնելուն՝ պահանջում են չվերցնել, պայքարել, փողոցն ակտիվացնել եւ հասնել իշխանափոխության: Ավելի խոհեմ եւ հեռուն նայող զանգվածը հասկանում է, որ առանց մանդատները վերցնելու հնարավոր չի լինի պայքարել՝ գոնե վճռական պահին, երբ գա քվեարկության պահը, խորհրդարանում կոճակ սեղմողներ են հարկավոր, ուստի չվերցնելը սխալ է: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանի** հետ:

- Անցողիկ շեմը հաղթահարած ընդդիմադիր երկու ուժերը՝ «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքները հայտարարեցին, որ վերցնում են մանդատները եւ գնում են խորհրդարան, սակայն շեշտում են, որ դա չի նշանակում, թե պայքարն ավարտված է, եւ այլեւս չունեն Նիկոլ Փաշինյանին հեռացնելու օրակարգ: Այն ուժերը, որոնք իշխանությունը «սկուտեղի» վրա հանձնել են Փաշինյանին եւ ընտրություններին չեն մասնակցել, եւ այն ուժերը, որոնք մասնակցել են, սակայն անգամ մեկ տոկոս ձայն չեն ստացել, պնդում են, որ պառլամենտ անցած ուժերը չպետք է վերցնեն մանդատները: Ոմանք նույնիսկ ոչ թե կարծիք են հայտնում, հորդորում, այլ ուղղակի հրամայում են, մեղադրում են, պահանջում: Ի՞նչ կարծիք ունեք այս պրոցեսների մասին:

- Հրամայելու իրավունք նրանք չունեն, այո, կարծիք հայտնելու իրավունք ունեն, միանշանակ, բայց, մեծ հաշվով, որոշում կայացնողները հենց խորհրդարան անցած ուժերն են: Նրանք գիտակցում են, որ մարդիկ իրենց քվե են տվել, որպեսզի իշխանափոխութուն իրականացնեն, եւ հիմա այդ ուժերը եթե գտնում են, որ վերցնելով մանդատները իշխանափոխությանը կնպաստեն, եթե կարծում են, որ դա եւս մեկ հնարավորություն է՝ հաջողության հասնելու, ապա պետք է վերցնեն մանդատները: Անձամբ ես կարծում եմ, որ մանդատները վերցնելը ճիշտ որոշում է: Չեմ կարծում, թե մանդատ չվերցնելով ընդդիմությունը ծանր հարված է հասցնելու իշխանությանը, մասնավորապես՝ Փաշինյանին:

- Քաղաքական որոշ գործիչներ պնդում են, որ եթե անգամ մանդատները վերցնում են, ապա դա պետք է փողոցային պայքարի հետ զուգորդվի, բայց քաղաքագիտության դասագրքերում ասվում է, նաեւ փորձն է ցույց տալիս, որ փողոցային պայքարը հենց այնպես, ինքնանպատակ չէ, այն քաղաքական որոշ պրոցեսների կուլմինացիոն փուլի համար է նախատեսված: Ի վերջո, Նիկոլ Փաշինյանն էլ միանգամից չհասավ հաջողության: 2003 թվականից նախկին իշխանությունների դեմ պայքար էր մղում: Հետո տեղի ունեցավ 2008-ի մարտի 1-ը, դրանից հետո բազմաթիվ շարժումներ եղան՝ «Էլեկտրիկ Երեւան» եւ այլն, եւ հենց այս ամենի արդյունքում 2018-ին տեղի ունեցավ իշխանափոխություն: Չե՞ք կարծում, որ անիմաստ է հենց այնպես փողոց դուրս գալը, եթե նախապես պրոցեսներ չեն եղել: Թե՞ ուղղակի փողոց դուրս գալով հնարավոր է, որ իշխանափոխություն լինի:

- Այո, բնականաբար, փողոցային պայքարը հաջողում է որոշակի արդյունավետ աշխատանքի արդյունքում: Այժմ շատ են հնչում կարծիքներ, որ ընտրությունների արդյունքների հետ կապված պետք է փողոցը գեներացնեն, բայց ընտրություններից մեկ ամիս է անցել: Ընդդիմությունն ուշացել է այս իմաստով: Ընտրությունների հենց հաջորդ օրը պետք է ընտրությունների արդյունքների համար փողոց դուրս գային: Այլ հարց է, որ իշխանությունները առաջիկայում որոշակի քայլեր են կատարելու, նրանք արտաքին ուժերին խոստումներ ունեն տված, օրինակ՝ սահմանադրության փոփոխություն, տարածքներ հանձնել եւ այլն: Այս ամենը կարող է փողոցային պայքար գեներացնելու հարմար առիթ դառնալ: Ընտրությունների թեմայով պայքար գեներացնելու հարցը պետք է մոռանալ: Այդ թեման էլ քննարկման ենթակա չէ, գնացքը գնացել է, սակայն առաջիկայում պայքարի շատ ավելի լուրջ առիթներ են լինելու, դրանք այնպիսի առիթներ են, որոնք բոլորիս են վերաբերում, բայց ընդդիմությունը պետք է կարողանա հասարակությանը բացատրել, որ այդ հարցերը ոչ թե քաղաքական նպատակներով են դարձել պայքարի առիթ, այլ այն պատճառով, որ դրանք Հայաստանը վտանգի են ենթարկում: Հասարակությունը եթե ցանկանա կանխել այդ պրոցեսները, դուրս կգա փողոց, անկախ քաղաքական ճաշակից: Հենց այնպես չէ, որ Արեւմուտքն աչք է փակում իշխանության հակասահմանադրական գործողությունների վրա, ոչ: Փաշինյանի իշխանությունն Արեւմուտքին հավատացրել է, որ այս ամենն արվում է հանուն իրենց համատեղ շահերի, եւ հենց այդ պատճառով էլ նրանք աչք են փակում այս բոլոր ապօրինությունների վրա: Իրավիճակը սա է:

- Մանդատները չվերցնելու կոչեր անողների առաջարկը, ըստ Ձեզ, ո՞րն է: Եթե չվերցնել մանդատները, ապա ի՞նչ անել:

- Հավանաբար կարծում են, որ մանդատները չվերցնելով իշխանության վարկանիշի վրա կազդեն, գուցե կա նաեւ նախանձի եւ խանդի առիթ, որ եթե իրենք չունեն մանդատ, ապա որեւէ այլ ընդդիմադիր ուժ չպետք է ունենա: Ասում են՝ փողոցային պայքար են ուզում, բայց ինչո՞վ են մանդատները խանգարում փողոցային պայքարին:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԹԵ ԱԺ ԱՆՑԱԾ ՈՒԺԵՐԸ ԿՌԻՎ ՉԵՆ ՏԱԼԻՍ, ՄԵՆՔ ՆՐԱՆՑ ՓՈԽԱՐԵՆ ՄԻՏԻՆԳ ԱՆԵՆՔ

ՇԱՆԹ

«Հրապարակի» զրուցակիցը «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության առաջնորդ, «Միասնության թեւեր»-ի չորրորդ համարը զբաղեցրած **Շահեն Հարությունյանն** է:

- Ընդդիմադիր ուժերը քանիցս հայտարարություններով են հանդես եկել, անգամ Ազգային ժողովրդավարական բեւեռը միացել է ընդդիմությանը, սակայն «Միասնության թեւերը», որն արտախորհրդարանական ամենամեծ ուժն է՝ ըստ հավաքած ձայների, այդպես էլ որեւէ հայտարարության չի միացել: Ինչն է պատճառը, գաղափարական անհամաձայնություններ ունեք, թե ...

- Գիտեք ինչ, սկսենք նրանից, որ ո՛չ «Շանթ դաշինքի», ո՛չ էլ «Միասնության թեւեր»-ի հետ չեն եղել առանձնահատուկ բանակցություններ, հենց ամենասկզբում ԲՀԿ-ի հետ հանդիպմանը մենք էլ ենք ներկա եղել, սակայն հետո, մի խոսքով.... ուզում եմ ասել, որ առնվազն բանակցություններ էլ տեղի չեն ունեցել, եւ հետո՝ իշխանության դեմ պայքարը միայն հայտարարություններով չէ: Եթե մենք հայտարարություններին չենք միանում, չի նշանակում, որ պայքարի մեջ չենք: Ով որտեղ պայքարելու հնարավորություն է տեսնում, պայքարում է՝ իր գաղափարներին համահունչ:

- Ասում եք, որ ընդդիմադիրները չեն բանակցել ձեզ հետ, սակայն նախորդ անգամ բանակցել են, գուցե այս անգամ չեն բանակցել, քանի որ նախորդ անգամ մերժել եք միանալ հայտարարությանը:

- Պարտադիր պայման չէ, որ բոլորը միանան հայտարարությանը: Ես տեսել եմ այդ հայտարարությունը, հինգ ուժ էր միացել, դե՝ միացել են, լավ են արել, ապրեն իրենք, մենք էլ առանձին մեր պայքարն ենք տանում: Հայաստանում գաղափարասվածն արժեզրկվել է: Ստացվել է այնպես, որ թվում է՝ գաղափարական հակադիր ճամբարներում գտնվող մարդիկ իրար հետ կարողանում են լեզու գտնել, սակայն կյանքը ցույց է տալիս, որ դա այնքան էլ այդպես չէ: Մենք այդքան կոչեր էինք անում, որ ընդդիմությունը համախմբվի, որ որոշ ուժեր դադարեցնեն փոխհրաձգությունները, սակայն տեսանք, որ նման բան այդպես էլ տեղի չունեցավ: Այդքանից հետո նոր որոշել են էլ սխալ չանել՝ գոնե հետընտրական փուլում: Հիմա պետք է պատասխանատվություն վերցնեն եւ գիտակցեն, թե իրենց քայլերի արդյունքում ինչ տեղի ունեցավ, հետո նոր միայն մտածեն այլ բաների մասին: Ի վերջո՝ համախմբումը չի լինում ինքնանպատակ, պետք էր նախընտրական փուլում հասկանալ, թե ինչը ինչի համար է արվում: Հետընտրական փուլում հայտարարում են, որ ուզում են համախմբվել, ինչի՞ շուրջ: Նախընտրական շրջանում համախմբումն իշխանությանը հեռացնելու համար կարող էր լինել, իսկ հիմա՝ հետընտրական շրջանում, դժվարանում եմ պատկերացնել, թե ինչի շուրջ կարող ենք համախմբվել:

- Հիմա էլ կարող է ընդդիմությունն իշխանությանը հեռացնելու օրակարգի շուրջ համախմբվել, ի դեպ՝ ասում եք, որ նախընտրական շրջանում համախմբման կոչեր չեն եղել, բայց տեղեկություններ կան, որ Արման Թաթոյանին առաջարկվել է միանալ ընդդիմադիր ամենամեծ ուժերից մեկին, սակայն Թաթոյանը մերժել է:

- Այդ նույն տրամաբանությամբ լիքը ուժերի էլ մենք ենք առաջարկել, սակայն մեզ չեն միացել: Բայց, օրինակ, մեր ուժը միացել է Արման Թաթոյանի ուժին: Ո՞վ է ասում, որ ընտրություններին միայն պետք է ՔՊ-ն լիներ եւ ՔՊ-ի սատելիտ ուժ, ու վերջ, էլ չլիներ որեւէ այլ ուժ:

- Բայց Դուք էիք նոր համախմբվելուց խոսում:

- Բայց եկեք նայենք՝ այն ուժերը, ովքեր գաղափարապես իրարից ոչնչով չեն տարբերվում, կազմեցի՞ն մի ճակատ: Գագիկ Ծառուկյան, Ռոբերտ Քոչարյան, Սամվել Կարապետյան:

- Այդ դեպքում ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք՝ ընդդիմությունը նախընտրական փուլում պետք է համախմբվեր:

- Գաղափարների, արժեքների եւ սկզբունքների վրա պետք է լիներ համախմբվածությունը եւ, որ ամենակարեւորն է՝ ճիշտ նպատակների ու ազնիվ նպատակադրումների համար: Մարդիկ պետք է ասեին, թե որն է իրենց նպատակը, ճանապարհային քարտեզը: Այո, մենք արտախորհրդարանական ուժ ենք, եւ խորհրդարանական ուժերի ձեռքերում է, թե տվյալ փուլում քաղաքական կյանքը որքան ակտիվ կլինի: Նրանք պետք է հասարակությանը ներկայացնեն, թե ինչ ճանապարհ են տեսնում: Հետո նոր դրանից հետո մեզ նման համեստ ուժերը կորոշեն իրենց անելիքները: Ժողովուրդն իր քվեով այսպիսի պառլամենտ է ձեւավորել, պետք է հաշվի նստենք այս ընտրության հետ եւ սպասենք պառլամենտական ընդդիմության գործողություններին:

- Բայց արդյո՞ք սա ժողովրդի ընտրությունն է: Բոլորիս աչքի առաջ ԲՀԿ-ի 60 հազար քվեն ապօրինաբար անվավեր ճանաչեցին, որպեսզի Նիկոլ Փաշինյանը երկու-երեք մանդատ ավել ունենա: Արդյո՞ք նման տեսանելի կեղծիքից հետո կարելի է պնդել, որ սա ժողովրդի ընտրությունն է: Սա դեռ միայն մեկ օրինակ է այն ընտրախախտումների, որոնց ականատեսն ենք բոլորս:

- Այո, բայց մենք ստացել ենք մոտավորապես 34 հազար քվե, մենք մեր ամեն մի քվեի համար կռիվ ենք տվել եւ տալիս ենք ու կտանք, բայց մեր 34 հազարը չի դառնալու 60 հազար, եւ մենք չենք անցնելու խորհրդարան: Այժմ եթե խորհրդարան անցած ուժերը կռիվ չեն տալիս իրենց քվեների համար, մենք նրանց փոխարեն միտի՞նգ անենք: Ի՞նչ անենք իրենց փոխարեն, որ լավ լինի: Պառլամենտ անցած ուժերն իրենք պետք է օրակարգ թելադրեն: Ես ԲՀԿ-ին համարում եմ պառլամենտ անցած ուժ, որին զրկեցին իր ձայներից՝ անարդար կերպով: Մյուս երկու ընդդիմադիր ֆրակցիաները, այդ թվում՝ ԲՀԿ-ն, պետք է ասեն, թե ինչ պետք է անել այս փուլում:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԱՅՍ ԱՄԵՆԻՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԽՈՐԱՆԱԼՈՒ Է

Նիկոլ Փաշինյանը չի հանդարտվում. հիմա էլ նրա թիրախում են հայտնվել ԲՀԿ-ն ու նրա առաջնորդ Գագիկ Ծառուկյանը, որը համարձակվել է առաջադրվել, 4 տոկոսը հաղթահարել է եւ չի հաշտվել իշխանությունների կողմից իր քվեները գողանալու փաստի հետ ու Սահմանադրական դատարան է դիմել: Հիշեցնենք. նախ հայտարարեցին, որ Ծառուկյանի ուժը հաղթահարել է անցողիկ շեմը, ապա Փաշինյանի թիմակից Վահագն Հովակիմյանը մի քանի ընտրատեղամասի արդյունքներն անվավեր ճանաչեց ու վերաքվեարկություն չնշանակեց: Երկու դեպքում էլ՝ եթե անվավեր չճանաչեին կամ ճանաչելուց հետո այդ տեղամասերում վերաքվեարկություն նշանակեին, ԲՀԿ-ն անցնում էր խորհրդարան: Իսկ այս երկակի ապօրինի քայլով ԿԸՀ-ն ուղղակի 5 մանդատ խլեց ընդդիմադիր ուժից եւ երեքը նվիրեց ՔՊ-ին: Գագիկ Ծառուկյանի մուտքն ԱԺ փակելով էլ Նիկոլ Փաշինյանը չբավարարվեց. որոշել է Ծառուկյանին պատկանող բիզնեսները խլել, նրան ունեզրկել եւ նստեցնել: Եվ դա անում է անթաքույց, բացահայտ՝ չվախենալով, որ դա քաղաքական հետապնդում կկոչվի, եւ իրեն կմեղադրեն սահմանադրական կարգը տապալելու՝ իրավապահ մարմիններին ապօրինի հրահանգներ իջեցնելու մեջ: Փաշինյանի անմիջական հրահանգով արդեն «Շանգրի Լա» խաղատունը զրկվել է լիցենզիայից, երեկ վաղ առավոտյան էլ տեղեկացանք, որ Քննչական կոմիտեում քննվող մեկ տասնյակից ավելի քրեական վարույթների շրջանակներում՝ 70-ից ավելի հասցեներում, այդ թվում՝ ԲՀԿ առաջնորդի առանձնատանը, նրա ձեռնարկությունների տնօրենների տներում խուզարկություններ են իրականացվում: Հիշեցնենք, որ օրեր առաջ էլ դատախազությունը միջնորդություն էր ներկայացրել ԿԸՀ՝ Գագիկ Ծառուկյանի անձեռնմխելիությունը հաղթահարելու, որը չէր քննարկվել ՍԴ քննության պատճառով: Հիմա ՍԴ-ն քննությունն ավարտել է, որոշումը կայացված է, եւ վարչապետ Փաշինյանն ու նրա կամակատար իրավապահներն անցել են գործի: Հիշեցնենք նաեւ, որ նախընտրական քարոզարշավի ժամանակ Փաշինյանը սպառնում էր ունեզրկել՝ «բոմժ սարքել, կզըցնել» ու կալանավորել իր բոլոր ընդդիմախոսներին. խոսքը Սամվել Կարապետյանի, Ռոբերտ Քոչարյանի եւ Գագիկ Ծառուկյանի մասին էր:

ԲՀԿ ցուցակով պատգամավորի թեկնածու առաջադրված, Երեւանի ավագանու անդամ, «Մայր Հայաստան» կուսակցության անդամ **Գեւորգ Ստեփանյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով ԲՀԿ-ի դեմ իշխանության հետապնդումների մասին, նկատում է. «Ինչպես գիտենք՝ «Մայր Հայաստանն» ու «Բարգավաճ Հայաստանը» նույն ցուցակով էին մասնակցում համապետական ընտրություններին, անցողիկ շեմը չորս տոկոսն էր, որը մենք հավաքել էինք, սակայն հետո թե ինչպես եղավ, Վահագն Հովակիմյանն ինչ թվեր նկարեց, ընտրություններից հետո պարզվեց, որ չորս տոկոսի շեմը չենք հաղթահարել, բայց դրանից առաջ էլ հայտարարում էին, որ հաղթահարել ենք, հետո նորից հայտարարեցին, որ չենք հաղթահարել: Ինչից հետո մենք գտանք անհետացած ձայները, որոնք ԿԸՀ-ն միտումնավոր չէր հաշվել, իսկ վերջում որոշեցին, որ այն ընտրատեղամասերում, որտեղ զինվորները ժամը 20:00-ից հետո են մասնակցել ընտրություններին, պետք է չեղյալ համարել եւ վերաքվեարկություն չանցկացնել՝ զրոյացնելով մեր բոլոր ընտրողների քվեները: Ապօրինությունները շարունակվում են: Հերթը հասավ Սահմանադրական դատարանին, քաղաքացիները, անկախ ամեն ինչից, ակնկալում էին, որ գոնե ՍԴ-ն տեր կկանգնի ժողովրդի քվեին, սակայն դա էլ տեղի չունեցավ, արդյունքում մոտ 60 հազար քվե ստացած ուժի ձայները զրոյացրին, փոշիացրին, եւ հիմա ռեպրեսիաների նոր ալիք է սկսվել:

Այս ամենից ՀՀ քաղաքացին ոչինչ չի շահելու: Մարդկանց կյանքում որեւէ բան չի փոխվելու այս շոուներից: Նիկոլ Փաշինյանը փորձում է մարդկանց լուրջ խնդիրներից շեղել եւ նման ինտրիգներով կերակրել, բայց մարդիկ անհանգիստ են, ունեն լուրջ մտահոգություններ՝ անվտանգության հետ կապված: Անդրանիկ Թեւանյանի հանդեպ էլ է մեծ ապօրինություն տեղի ունեցել: Գագիկ Ծառուկյանի հետ կատարվողն էլ պետք է նույն պրիզմայի մեջ տեսնել: Այս մարդիկ փոխանակ լուրջ հարցերով զբաղվեն, զբաղված են քաղաքական շոուներ բեմադրելով: Ինչպե՞ս է ստացվում, որ այս ութ տարիներին Գագիկ Ծառուկյանի բիզնեսների հետ կապված որեւիցե խնդիր չկար, սակայն երբ նա մասնակցեց ընտրություններին, հանկարծ պարզվեց, որ գործեր պետք է հարուցվեն եւ այլն: Վստահեցնում եմ Ձեզ, որ Գագիկ Ծառուկյանին պատկանող հիմնարկներում 6000-7000 մարդ է աշխատում: Մարդիկ «Արարատցեմենտ»-ից, կոնյակի գործարանից հարցնում են՝ ի՞նչ է լինելու մեր վերջը, եւ շատ վատ վիճակում գնում են տուն, չենք խոսում այն հարկերի մասին, որ այդ բիզնեսների շնորհիվ վճարվում է պետությանը: Ես չգիտեմ, թե Նիկոլ Փաշինյանն ինչի է ուզում հասնել այս քայլերով, սակայն վստահաբար ասում եմ՝ այս ամենից ո՛չ Հայաստանն է շահելու, ո՛չ էլ հայ ժողովուրդը, հակառակը՝ կառավարման ճգնաժամը խորանալու է»:

ԻՐԱՎԻՃ

ՉԻ ԿԱՐԵԼԻ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ ՄԵՂԱԴՐԵԼ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՉՏԱՆԵԼՈՒ ՄԵՋ

Կեղծ հեղափոխականների, դեմագոգների, կեղծավորների եւ, որքան էլ ցավալի լինի՝ իսկապես մտահոգ մարդկանց մի ստվար զանգված հարձակվել է ընդդիմության վրա, Նարեկ Կարապետյանի վրա՝ նրան մեղադրելով մանդատները վերցնելու որոշումը հրապարակայնացնելու համար: Ասում են, թե բա ո՞նց կարելի էր. դրանով դուք լեգիտիմացնում եք ոչ օրինական՝ կեղծված ընտրություններով իշխանազավթներին, ինչո՞ւ չկա փողոցային պայքար, պայմանական Զմեռային պալատի գրավում՝ հեղափոխություն, բա մենք դրա համա՞ր էինք ձեզ ձայն տվել, որ դուք պատգամավոր աշխատեք, մենք ձեզ ձայն ենք տվել, որ դուք իշխանափոխություն անեք, եթե մանդատ եք վերցնում, ուրեմն ոչնչով չեք տարբերվում իշխանությունից, համատեղ նույն խաղն եք խաղում եւ այլն: Նման բան ասողների մի մասը կատարյալ կեղծավորներ են, սրանք երբեք ընդդիմության հանրահավաքներին չեն էլ մասնակցել, նույնիսկ չեն քվեարկել, մի մասն էլ ուղղակի սիրում է հերոս ձեւանալ՝ ուրիշներին վախկոտ կամ ոչ բավարար վճռական լինելու մեջ մեղադրելու միջոցով: Արդյո՞ք փողոցային պայքարով հնարավոր էր հասնել իշխանափոխության. նախ տեսնենք, թե ինչ է ցույց տալիս մեր հասարակական-քաղաքական կյանքի վերջին 30 տարվա փորձը:

1991 թվականի նախագահական ընտրություններից հետո էլ եղան մեղադրանքներ, որ ընտրություններն անցել են ոչ ազատ եւ արդար, ընդդիմադիր թեկնածուների նկատմամբ եղել են ճնշումներ, խտրական վերաբերմունք, բայց փողոցային մասսայական պայքար, այսպես ասած, հետընտրական զարգացումներ չեղան: 1996 թվականի նախագահական կեղծված ընտրություններից հետո ընդդիմության առաջնորդ, ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը փողոցային պայքարի կոչ արեց: Միասնական ընդդիմությունը, այդ թվում՝ Դաշնակցությունը, տասնյակ հազարավոր մարդկանց հանեց փողոց, Վազգեն Մանուկյանը մտավ ԱԺ շենք, որտեղ այդ ժամանակ գտնվում էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ԿԸՀ անդամների հետ ընտրության արդյունքները չեղարկելու շուրջ բանակցելու համար, այդ ընթացքում վճռական տրամադրված ցուցարարները կոտրեցին ԱԺ ցանկապատը եւ մտան ԱԺ շենք, ծեծի ենթարկվեցին ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանն ու փոխնախագահ Արա Սահակյանը: Հետո տարածեցին, թե ԱԺ ցանկապատի միացումները հատուկ են թուլացրել, որ ԱԺ շենքի գրոհը պրովոկացիա էր, որ երկրում հատուկ դրություն հայտարարվի: Բանակը մտավ քաղաք, փողոցներում եւ հրապարակներում, նույնիսկ զբոսայգիներում զինվորականներ էին, ընդդիմության շատ կողմնակիցներ կալանավորվեցին, առաջնորդներն անցան ընդհատակ, մեկ տարուց ավելի ընդդիմությունն ԱԺ նիստերին չէր մասնակցում: Հետո սկսեցին մասնակցել: Ի՞նչ փոխվեց՝ ոչինչ:

1998 թվականի փետրվարի 3-ին իշխանությունը փոխվեց ներիշխանական պայքարի եւ ինտրիգների արդյունքում: Մարտին կազմակերպվեցին արտահերթ նախագահական ընտրություններ, հիմնական թեկնածուները վարչապետ Ռոբերտ Քոչարյանն ու Կոմկուսի կենտկոմի նախկին ղեկավար Կարեն Դեմիրճյանն էին: Հայ հասարակությունը Ռոբերտ Քոչարյանին չէր ճանաչում, իսկ Կարեն Դեմիրճյանի նկատմամբ կար նոստալգիկ սեր, մարդիկ, ի դեմս նրա, հիշում էին կոմունիստական երանելի տարիները, երբ կային անվճար կրթություն, առողջապահություն, բնակարանաշինություն, արդյունաբերություն, զարգացող գիտություն, աշխատանք եւ արժանապատիվ կյանքի հնարավորություն: Ընտրությունը եղավ երկու փուլով, Քոչարյանը հաղթող հռչակվեց, բայց մարդկանց մեծամասնությունը վստահ էր, որ Կարեն Դեմիրճյանից հաղթանակը գողացել են: Կինոյի տանը գտնվող նրա կենտրոնական շտաբում այդ օրը հավաքվել էին նրա մի քանի հազար կողմնակիցները, ովքեր փողոցային պայքարի կոչի էին սպասում, Դեմիրճյանը խոսեց կարճ, ասաց՝ գիտեմ, որ բոլորիդ մոտ անարդարության զգացում կա, բայց մենք երկիրը չենք ապակայունացնելու, կուսակցություն ենք ստեղծելու եւ գնալու ենք քաղաքական պայքարի ճանապարհով: Մեկ տարի անց նրա ստեղծած Հայաստանի ժողովրդական կուսակցությունը եւ Հանրապետական կուսակցությունը, որը գլխավորում էր Վազգեն Սարգսյանը, ստեղծեցին «Միասնություն» դաշինքը, հաղթեցին խորհրդարանական ընտրություններում եւ կառավարություն ձեւավորեցին: Մի քանի ամիս անց տեղի ունեցավ հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը:

2003 թվականի նախագահական ընտրություններում գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանի հիմնական քաղաքական հակառակորդը Կարեն Դեմիրճյանի որդին էր, որը նրա սպանությունից հետո ընտրվել էր ՀԺԿ նախագահ: Այս անգամ եւս ընտրությունները երկու փուլով եղան, եւ կրկին ԿԸՀ-ն Քոչարյանին հռչակեց ընտրությունների հաղթող, տասնյակ հազարավոր մարդիկ անարդարության դեմ պայքարի համար դուրս եկան փողոց, նման մասսայական հանրահավաքներ Հայաստանը չէր տեսել 1988 թ. արցախյան շարժումից հետո: Ընդդիմությունը դիմեց ՍԴ, որը որոշեց մեկ տարի հետո վստահության հանրաքվե կազմակերպել: Հասարակությունը խաղաղվեց, բայց մեկ տարի հետո՝ 2004 թ. ապրիլին, հանրահավաքները սկսվեցին նոր ուժով, իշխանությունը հրաժարվում էր վստահության հանրաքվե կազմակերպել, ընդդիմությունը պահանջում էր կատարել ՍԴ որոշումը: Իշխանությունն ուժ կիրառեց Բաղրամյան փողոցը փակած ցուցարարների նկատմամբ, հարյուրավոր մարդիկ ձերբակալվեցին, ընդդիմության գրասենյակներն ավերվեցին, որոշ մարդիկ հաշմանդամ դարձան: Իշխանափոխություն տեղի չունեցավ:

2008 թվականին իշխանության թեկնածու Սերժ Սարգսյանի հիմնական մրցակիցը նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր, որի շուրջ համախմբվել էր 16 ընդդիմադիր կուսակցություն: ԿԸՀ-ն Սարգսյանին հաղթող ճանաչեց, սկսվեց ընտրության արդյունքները վիճարկելու փողոցային պայքար, որն ավարտվեց իշխանության կողմից կազմակերպված բռնությամբ, մարտի 1-ի իրադարձություններին զոհ գնացին 8 քաղաքացիական անձ եւ երկու ոստիկան: Իշխանափոխություն չեղավ:

2013 թվականի նախագահական ընտրություններում նախագահ Սերժ Սարգսյանի հիմնական մրցակիցը «Ժառանգության» նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանն էր, նա էլ փորձեց ընտրություններից հետո հետընտրական պայքար կազմակերպել, որն ավարտվեց ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի հետ համատեղ աղոթքով եւ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումով, ինչը, ըստ էության, ընտրության արդյունքների ճանաչում էր: Փողոցով իշխանափոխություն չեղավ:

Կարող են ասել՝ բայց չէ՞ որ դրանից 5 տարի անց՝ 2018 թվականին, տեղի ունեցավ իշխանափոխություն, փողոցային պայքարի արդյունքում Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց, իսկ Նիկոլ Փաշինյանը դարձավ վարչապետ, ինչո՞ւ չկրկնել 2018-ի հաջողված փորձը, ինչո՞ւ եք հիշում միայն անհաջողությունները: 2018-ին տեղի ունեցածը գունավոր հեղափոխություն էր, որը ծրագրված էր դրսում եւ ուղղորդվում էր դրսից: Հայ հասարակությունն այդ հեղափոխության կազմակերպիչը չէր, ոչ էլ իրականացնողը, այլ միայն դեկորացիան, մասսովկան: Դրա համար էլ հասարակությունը չդարձավ դրա շահառուն, ոչինչ չստացավ՝ միայն կորցրեց, ի տարբերություն հեղափոխության իրական տերերի:

Զինված իշխանության եւ անզեն հասարակության պայքարը միշտ ավարտվում է անզեն հասարակության պարտությամբ: Մեղադրել ընդդիմությանը՝ հերթական անգամ հասարակությանը պարտության չտանելու մեջ, այնքան էլ արդար չէ: Աշխարհի ցանկացած երկրում, այդ թվում՝ Հայաստանում, իշխանափոխություն հնարավոր է, միայն թե դրա համար պետք է իսկապես հեղափոխական ուժ, որը կկարողանա հեղափոխություն անել, ոչ թե դրսի տերերի հրահանգավորմամբ գունավոր հեղաշրջում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ի՞ՆՉ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՐ, ԵԹԵ...

Ստանալով ՍԴ որոշումը՝ ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձը սկսեց ընդդիմադիրների նկատմամբ բռնությունները: Իսկ ի՞նչ տեղի կունենար, եթե հայրենասեր, գրագետ ու մտածող զանգվածների աջակցությունը վայելող 3 քաղաքական ուժերը միավորվեին: Այդ դաշինքը մաքուր կստանար 545 հազար ձայն: Անփոփոխ ենք թողնում ՔՊ-ի շուրջ 727 հազար եւ Արման Թաթոյանի «Միասնության թեւեր»-ի ստացած մոտ 34 հազար ձայնը: Այդ տվյալների առկայության պայմաններում ԱԺ մուտք կգործեին ՔՊ-ն, «Ուժեղ Հայաստան» դաշինքն ու իրավունքի ուժով՝ «Միասնության թեւեր»-ը: Խորհրդարանը կունենար 101 անդամ, 56-ը՝ ՔՊ-ն, «Ուժեղ Հայաստան»-ը՝ 42 եւ 3 մանդատ «Միասնության թեւեր»-ը: Ընդհանուր պատկերը կլիներ այսպիսին. Նիկոլենք՝ 55.5% եւ 44.5% էլ՝ ընդդիմությունը:

Գանք հականիկոլական մյուս ուժերին՝ Հայ ազգային կոնգրես, Ազգային-ժողովրդավարական բեւեռ եւ «Լուսավոր Հայաստան», որոնք միասին ստացել են 16 հազար քվե: Այդ ձայները եւս կգումարվեին «Ուժեղ Հայաստան»-ի ստացած քվեներին, եթե միանային էն գլխից: Արդյունքում կստանայինք 561 հազար, ինչի շնորհիվ ՔՊ-ի բաժինը կպակասեր 1 մանդատով՝ կազմելով 55: «Ուժեղ Հայաստան»՝ 43, եւ 3 մանդատ՝ «Միասնության թեւեր»: Կունենայինք այսպիսի պատկեր. ընդդիմություն՝ 45.5445544554% (տասնորդական թվերի լրացուցիչ քանակը նվիրում եմ ԿԸՀ-ի նախագահին), իշխանություն՝ 54.45... տոկոս: Եվ մի հանգամանք եւս. միավորվելու պարագայում աջակիցների քանակը, վստահաբար, կավելանար: Եթե նույնիսկ առկա չլիներ դա, մանդատների արդեն ներկայացված բաշխվածությունը ցույց է տալիս, որ նույնիսկ օրենսդրական նախաձեռնության համար Նիկոլն անընդհատ ստիպված էր լինելու մոբիլիզացնել իր բոլոր «ուսապարկերին»: Եվ այդ անձանց համար պետության հաշվին միջազգային այցերը լինելու են հազվադեպ մի բան: Եվ պատկերացրեք, որ ագրեսիվ թշնամու պահանջով Նիկոլը ստիպված էր լինելու ոչ թե հանրաքվե, այլ գոնե ինչ-որ օրենսդրական փոփոխություններ անցկացնել խորհրդարանում...

Մանդատների այսօրվա բաշխվածությամբ (64-29-12), նրան անհրաժեշտ է ընդամենը 4 մանդատ, որպեսզի ունենա 2/3 (67.3333) ու կյանքի կոչի այնքան բաղձալի հանրաքվեն: Իսկ դրա համար անհրաժեշտ է թուլացնել ընդդիմադիր խմբակցություններին: Եվ դա արվում է հատկապես քրեական վարույթներով: Պարզ է, որ արդեն իսկ ուսումնասիրվում են (եթե նախորոք չեն ուսումնասիրվել) «Ուժեղ Հայաստան» եւ «Հայաստան» դաշինքների նախընտրական ցուցակները: Այսինքն, քրվարույթներ կհարուցեն արդեն մանդատ ստացածների նկատմամբ՝ զրկելով նրանց պատգամավորական անձեռնմխելիությունից, եւ կգտնեն անհրաժեշտ մարդկանց: Իսկ որ դա արվելու է՝ կասկածի ենթակա չէ, որովհետեւ դրանից են կախված նիկոլական «խաղաղության» ճակատագիրն ու հետագա անամպ պաշտոնավարման հեռանկարը: Թե ինչպես է դրան դիմագրավելու ընդդիմությունը՝ չեմ պատկերացնում: Եթե հաշվի չառնենք փողոցային ընդվզումը, ինչը դեռեւս իրեն զգացնել չի տալիս, քանի որ դեռեւս չի հայտնվել անձնազոհ մեկը, որը ձեռնոց կնետի գործող իշխանությանը եւ կգնա մինչեւ վերջ:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՃԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԻ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ, ԱԺԲ խորհրդի անդամ **Արա Պապյանն** է:*

- Իսրայելի կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունումը վերջին օրերին քննարկվող ամենաթեժ թեմաներից մեկն է: Միատարր կարծիքը, թերեւս, այն է, որ Իսրայելի որոշման գլխավոր պատճառը Թուրքիայի հետ լարված հարաբերություններն են: Նշվում է նաեւ Անկարային զսպող աշխարհաքաղաքական ալյանսի՝ Հունաստան, Կիպրոս-Ֆրանսիա-Իսրայել դաշինքի գործոնը: Ըստ Ձեզ, ինչո՞ւ հենց հիմա Թել Ավիվը գնաց նման քայլի:

- Իսրայելի կառավարության այս քայլը պետք չէ դիտարկել որպես զուտ բարոյական զարթոնք կամ պատմական արդարության ուշացած վերականգնում: Պետությունները, հատկապես Մերձավոր Արեւելքում, նման որոշումներ ընդունում են նախեւառաջ ռազմավարական հաշվարկներից ելնելով: Այո՛, Թուրքիայի հետ հարաբերությունների սրումն այստեղ կարեւոր գործոն է: Տասնամյակներ շարունակ Իսրայելը խուսափում էր Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումից՝ Անկարայի հետ ռազմական, հետախուզական եւ տարածաշրջանային համագործակցության պատճառով: Սակայն այսօր այդ հարաբերությունները փաստացի անցել են խոր հակադրության փուլ: Այդ պայմաններում նախկին ինքնասահմանափակումը կորցրել է իր արժեքը: Բայց միայն այդքանով հարցը չի սահմանափակվում: Կա նաեւ ավելի լայն աշխարհաքաղաքական հաշվարկ: Իսրայելն այսօր վերաձեւավորում է իր տարածաշրջանային անվտանգային ճարտարապետությունը՝ ամրացնելով առանցքը Հունաստան-Կիպրոս-Ֆրանսիա-Իսրայել ձեւաչափով: Այդ համատեքստում Թուրքիային պատմական եւ քաղաքական ճնշման տակ պահելը դառնում է այդ ռազմավարության մի մասը: Միաժամանակ սա նաեւ ուղերձ է Ադրբեջանին: Բաքուն տարիներ շարունակ փորձել է համատեղել Իսրայելի հետ ռազմավարական գործընկերությունը Թուրքիայի հետ իր սերտ կապերի հետ: Բայց այս քայլը ցույց է տալիս, որ Իսրայելի համար նույնիսկ ռազմավարական գործընկերությունները բացարձակ չեն, եթե ավելի մեծ ռազմավարական շահերն այլ ուղղություն են թելադրում: Հայկական տեսանկյունից սա պետք է ընկալել ոչ թե որպես վերջնական հաղթանակ, այլ որպես հնարավորության պատուհան: Միջազգային հարաբերություններում բարոյականությունն արժեք ունի միայն այն դեպքում, երբ համընկնում է շահերի հետ: Մեր խնդիրը պետք է լինի ոչ թե պարզապես ուրախանալ ճանաչմամբ, այլ հասկանալ, թե ինչպես այդ նոր իրողությունը վերածել Հայաստանի համար իրական քաղաքական, անվտանգային եւ ռազմավարական կապիտալի:

- Ուշագրավ փաստ եք մեջբերել. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովում Իսրայելին վերաբերող քվեարկությունների ժամանակ, ըստ UN Watch-ի պաշտոնական տվյալների, 2015-ից մինչեւ 2026-ի ապրիլը Հայաստանը 158 անգամ քվեարկել է Իսրայելի դեմ, Իսրայելը մեր երկրի դեմ 1 անգամ է քվեարկել: Ինչի՞ մասին է վկայում այս վիճակագրությունը եւ որքանո՞վ է ազդեցություն գործել Հայոց ցեղասպանության հետ կապված որոշման վրա:

- Այս վիճակագրությունը վկայում է մի շատ պարզ, բայց մեզ համար ցավալի իրողության մասին. Հայաստանը երկար տարիներ ՄԱԿ-ում գործնականում վարել է ոչ թե սեփական ազգային շահից բխող, այլ հաճախ ինքնաբերաբար հակաիսրայելական քվեարկությունների քաղաքականություն: Եթե 2015-ից մինչեւ 2026-ի ապրիլը Հայաստանը 158 անգամ քվեարկել է Իսրայելի դեմ, իսկ Իսրայելը Հայաստանի դեմ հիշատակվող միայն մեկ քվեարկություն ունի, ապա այստեղ համաչափություն չկա: Սա ցույց է տալիս, որ Հայաստանն Իսրայելի նկատմամբ կուտակել է բացասական քաղաքական հաշվեկշիռ՝ առանց դրա դիմաց որեւէ իրական ազգային շահ ստանալու: Իմ կարծիքով՝ այս հանգամանքը տարիներ շարունակ վնասել է ոչ միայն հայ-իսրայելական հարաբերություններին, այլեւ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի առաջմղմանը Իսրայելում: Իհարկե, Իսրայելի այսօրվա որոշման գլխավոր պատճառը տարածաշրջանային նոր իրավիճակն է, հատկապես՝ Թուրքիայի հետ խորացող հակասությունը: Բայց չի կարելի անտեսել, որ Հայաստանի հակաիսրայելական քվեարկությունները երկար տարիներ Իսրայելում ձեւավորել են անվստահության մթնոլորտ: Պարզ ասած՝ եթե դու անընդհատ քվեարկում ես մի պետության դեմ, ապա չես կարող ակնկալել, որ այդ պետությունը քո պատմական ցավի հարցում մշտապես կգործի քո օգտին: Միջազգային հարաբերություններում ոչ ոք պարտավոր չէ սիրել մեզ միայն այն պատճառով, որ մենք արդար պահանջ ունենք: Մենք՝ ինքներս, պետք է կարողանանք մեր արդար պահանջը կապել մեր պետական շահերի, դաշնակիցների եւ ռազմավարական հաշվարկների հետ: Ուստի այս վիճակագրությունը պետք է մեզ համար սթափեցնող դաս լինի: Հայաստանը պետք է դադարի լինել ուրիշների օրակարգերի մեխանիկական կցորդը եւ սկսի քվեարկել ըստ իր ազգային շահի: Եթե այսօր Իսրայելը գնում է Հայոց ցեղասպանության ճանաչման ճանապարհով, ապա մեր պարտքն է՝ այդ պատուհանը փակելու փոխարեն բացել նոր հարաբերությունների համար:

- Իսկ որքանո՞վ է հավանական, որ Կնեսետը վերջնականապես կընդունի գործադիրի որոշումը՝ կայացնելով պատմական որոշում եւ պաշտոնապես ճանաչելով Հայոց ցեղասպանությունը: Չմոռանանք Ադրբեջանի հետ դաշնակցային կապերը, այլ գործոններ:

- Իմ գնահատմամբ՝ եթե Իսրայելի գործադիրն արդեն գնացել է այս քայլին, ապա Կնեսետում դրա վերջնական հաստատման հավանականությունը բավական բարձր է: Բայց այստեղ պետք է հստակ արձանագրել մի կարեւոր հանգամանք. անկախ նրանից, թե ինչպիսին կլինի Կնեսետի վերջնական քվեարկությունը, Իսրայել պետությունն արդեն իսկ քաղաքական եւ իրավական իմաստով ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, որովհետեւ պետական համակարգում գործադիր իշխանությունն է ներկայացնում պետության պաշտոնական դիրքորոշումը: Այսինքն՝ մենք արդեն գործ ունենք պետական ճանաչման փաստի հետ, իսկ Կնեսետի որոշումը լինելու է դրա օրենսդրական եւ պատմաքաղաքական ամրագրումը: Պետք է հասկանալ Իսրայելի քաղաքական համակարգի տրամաբանությունը: Այնտեղ նույնիսկ ամենազգայուն պատմական եւ արտաքին քաղաքական հարցերը հաճախ անցնում են բարդ ներքաղաքական հաշվարկների միջով: Հայոց ցեղասպանության ճանաչումը միայն պատմական արդարության հարց չէ. դա անմիջապես առնչվում է Թուրքիայի, Ադրբեջանի եւ ավելի լայն տարածաշրջանային հավասարակշռությանը: Ադրբեջանի գործոնը, անշուշտ, կարեւոր է: Ադրբեջանն Իսրայելի համար ոչ միայն էներգետիկ աղբյուր է, այլեւ՝ ռազմավարական հենակետ Իրանի հյուսիսային սահմանների հարեւանությամբ: Այդ հարաբերությունները խորն են՝ ռազմական, հետախուզական եւ տեխնոլոգիական մակարդակներում: Բաքուն, բնականաբար, փորձելու է նվազեցնել կամ մեղմել այդ գործընթացը: Բայց այստեղ կա մի կարեւոր հանգամանք. Իսրայելը վաղուց ցույց է տվել, որ կարողանում է բաժանել պատմական, խորհրդարանական եւ ռազմավարական հարթությունները: Նույնիսկ եթե Կնեսետը ճանաչի Հայոց ցեղասպանությունը, դա պարտադիր չի նշանակում, որ Իսրայելը կվերանայի իր ռազմավարական կապերն Ադրբեջանի հետ: Այդ հարաբերությունները կառուցված են շահերի վրա, ո՛չ զգացմունքների: Հիմա հիմնական փոփոխականը Թուրքիան է: Եթե Անկարայի հետ հակասությունները շարունակեն խորանալ, Կնեսետի ճանաչման շանսերը մեծանում են: Եթե, հակառակը՝ սկսվի հարաբերությունների վերականգնում, գործընթացը կարող է դանդաղել կամ մասամբ սառեցվել: Ուստի, ես սա դիտում եմ ոչ թե որպես ավարտված գործընթաց, այլ որպես բացված քաղաքական պատուհան: Եվ այստեղ Հայաստանի խնդիրը շատ հստակ է՝ ոչ թե սպասել, թե ինչ կանի Իսրայելը, այլ աշխատել այնպես, որ այդ պատուհանը փակվելու փոխարեն վերածվի նոր ռազմավարական հարաբերության հիմքի: Եթե մենք կրկին սահմանափակվենք միայն բարոյական բավարարվածությամբ, ապա հերթական պատմական հնարավորությունը կկորցնենք:

- Դիցուք, հրեական պետությունը ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, բարոյականից բացի, ուրիշ ինչո՞վ Հայաստանը կարող է կապիտալացնել այդ կարեւոր քայլը:

- Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը, իհարկե, ունի հսկայական բարոյական եւ պատմական նշանակություն: Բայց եթե մենք դա սահմանափակենք միայն բարոյական հարթությամբ, ապա կրկին կկորցնենք հնարավորությունը: Իմ մոտեցմամբ՝ յուրաքանչյուր նման քայլ պետք է վերածվի քաղաքական եւ ռազմավարական կապիտալի: Առաջինը՝ դա կարող է հիմք դառնալ հայ-իսրայելական հարաբերությունների որակական վերափոխման համար: Տասնամյակներ շարունակ այդ հարաբերությունները մնացել են թերօգտագործված՝ փոխադարձ անվստահության, իներցիայի եւ սխալ քաղաքական ազդակների պատճառով: Ճանաչումը կարող է դառնալ նոր էջ բացելու հնարավորություն: Երկրորդ. անվտանգային ոլորտն է: Պետք է իրատես լինել. Իսրայելն այսօր աշխարհի առաջատար երկրներից է՝ ռազմական տեխնոլոգիաների, հետախուզության, հակաօդային պաշտպանության, կիբեռանվտանգության եւ անօդաչու համակարգերի ոլորտներում: Հայաստանի համար, որը գոյաբանական սպառնալիքների մեջ է ապրում, այդ ուղղությամբ համագործակցությունը կարող է ունենալ կենսական նշանակություն: Երրորդ. սա կարող է դառնալ նոր կամուրջ դեպի Միացյալ Նահանգներ: Պետք չէ մոռանալ, որ Իսրայելի ազդեցությունն ամերիկյան քաղաքական, անվտանգային եւ տեխնոլոգիական շրջանակներում չափազանց մեծ է: Եթե Հայաստանը կառուցի վստահելի եւ ռազմավարական հարաբերություն Իսրայելի հետ, դա կարող է ուժեղացնել նաեւ հայ-ամերիկյան կապերը: Չորրորդ. տեխնոլոգիական եւ տնտեսական համագործակցությունն է: Իսրայելը startup nation է՝ բարձր տեխնոլոգիաների, ջրային կառավարման, գյուղատնտեսության, բժշկության եւ արհեստական բանականության ոլորտներում: Հայաստանը կարող է այստեղ ստանալ ոչ թե պարզապես ներդրումներ, այլ՝ գիտելիք եւ համակարգային փորձ: Հինգերորդ. դա կարող է էապես փոխել հրեական աշխարհի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: Խոսքը ոչ միայն Իսրայելի, այլեւ համաշխարհային հրեական կազմակերպությունների, մտավոր շրջանակների, ազդեցիկ մեդիայի եւ քաղաքական լոբբիստական կառույցների մասին է: Ճանաչումից հետո Հայաստանի նկատմամբ ուշադրությունն ու ընկալումը կարող են մտնել լրիվ նոր մակարդակ: Վեցերորդ. սա կարող է թուլացնել թուրք-ադրբեջանական քարոզչական մենաշնորհը: Տարիներ շարունակ Անկարան ու Բաքուն փորձել են ներկայացնել հայկական հարցը՝ որպես միակողմանի պատմական նարատիվ: Եթե Իսրայելն է ճանաչում Հայոց ցեղասպանությունը, այդ նարատիվը ստանում է լրացուցիչ ծանրություն եւ միջազգային լեգիտիմություն՝ հատկապես Արեւմուտքում: Եվ վերջապես՝ կա քաղաքական-իրավական բաղադրիչը: Եթե հենց Հոլոքոստը վերապրած ժողովրդի պետությունն է ճանաչում Հայոց ցեղասպանությունը, դա ուժեղացնում է ցեղասպանության միջազգային ճանաչման ու կանխարգելման ամբողջ ճարտարապետությունը եւ լրացուցիչ ծանրություն տալիս հայկական պահանջատիրությանը: Բայց այստեղ ամենակարեւոր պայմանը մեկն է. Հայաստանը պետք է դադարի վերաբերվել արտաքին քաղաքականությանը որպես հուշակոթողային հիշողության քաղաքականության: Պետք է կարողանանք պատմական արդարությունը վերածել պետական շահի: Հենց դա է դիվանագիտության իմաստը:

Արա ԱԼՈՅԱՆ

Ասք՝ Սիբիրի մասին

Սովետական կինոարվեստի ամենածավալուն պատմական կինոնախագծերից մեկը, որը ներկայացնում է 20-րդ տարի ռուսական համայնապատկերը, թերեւս Անդրեյ Կոնչալովսկու «Սիբիրիադան» է՝ նկարահանված 1978 թվականին: Քառամաս կինոնկարը ոչ միայն պարզապես գեղարվեստական ներկայացումն է Սիբիրի մի գյուղի մի քանի սերունդների կյանքի, այլ նաեւ երկրի յուրօրինակ կինոժամանակագրություն է, երկիր, որն անցել է հեղափոխություն եւ քաղաքացիական պատերազմ, կոլեկտիվացում, ինդուստրիալացում, Հայրենական մեծ պատերազմ եւ Սիբիրի բնական հարստությունների յուրացում:

Սովետական կինոարվեստում սա անսովոր գեղարվեստական մեծ կտավ է, որտեղ առկա են բարդ դրամատուրգիան, սիմվոլիկ պատկերայնությունը՝ զուգորդված խոր փիլիսոփայական բովանդակության հետ: Ի տարբերություն ավանդական պատմական էպոսի, «Սիբիրիադան չի ձգտում միայն ներկայացնել անցյալի իրադարձությունները: Այն հետազոտում է պատմական պրոցեսները, մարդու եւ բնության, մարդու եւ պետության, ավանդույթի եւ տեխնիկական առաջընթացի միջեւ կոնֆլիկտները: Կինոնկարի նկարահանումները սկսվել են 1970-ականների կեսերին, երբ սովետական կինոն դեռ անդրադառնում էր մեծածավալ պատմական թեմաներին: Սակայն Անդրեյ Կոնչալովսկու ծրագիրը զգալիորեն տարբերվում էր նմանատիպ այլ նախագծերից: Սցենարիստ Վալենտին Եժովի հետ՝ նա ստեղծում է մի գործ, որը պետք է ժամանակագրորեն ընդգրկեր ռուսական պատմության մոտ 70-ամյա շրջանը՝ ներկայացնելով սիբիրյան Ելան գյուղի բնակիչների մի քանի սերնդի պատմությունը: Նկարահանումները տեւել են մի քանի տարի, իրականացվել են շատ բարդ բնական պայմաններում: Կինոնկարի զգալի մասի նկարահանումներն իրականացվել են սիբիրյան տայգայում: Եվ դրա շնորհիվ կինոնկարը նաեւ վավերագրական զգալի արժեք է ստացել: Մեծ ուշադրություն է դարձվել պատմական ժամանակաշրջանների ճշգրիտ վերակերտումներին: Կինոնկարին յուրահատուկ հմայք է տալիս Էդուարդ Արտեմովի երաժշտությունը: «Սիբիրիադայում» նրա գրած էլեկտրոնային երաժշտությունը հասել է արտահայտչականության նոր բարձունքի: Այն ստեղծում է յուրահատուկ երաժշտական-փիլիսոփայական աուրա, որը միավորում է անցյալն ու ապագան:

Կինոնկարում նկարահանվել են սովետական կինոյի գիգանտները՝ Նիկիտա Միխալկովը, Վիտալի Սոլոմինը, Սերգեյ Շակուրովը, Լյուդմիլա Գուրչենկոն, Նատալյա Անդրեյչենկոն, Վլադիմիր Սամոյլովը եւ այլք: Սա կինոնկար է, որը կհետաքրքրի հատկապես ռուսական եւ սովետական պատմությամբ հետաքրքրվողներին, ովքեր, չոր դասագրքային պատմությունից այն կողմ, սիրում են ուսումնասիրել նաեւ մարդկանց, ճակատագրերի պատմությունը՝ ժամանակի եւ պատմության համատեքստում:

Կորել է

Լուսինե Արսենի Սարգսյանի դիպլոմը: Այն տրվել է 2011 թվականին՝ Երեւանի պետական հենակետային քոլեջի կողմից (մասնագիտություն՝ քույրական գործ): Դիպլոմի համարը՝ AK096648, գրանցման համարը՝ 734, տրվել է 07.07.2011 թվականին:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԱՆԿԱՐԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՆԱՏՕ-Ի ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ

Ինչպես հայտնի է, հուլիսի 7-ին, Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում մեկնարկելու է ՆԱՏՕ-ի գագաթնաժողովը:

Գագաթնաժողովին մասնակցելու է նաեւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը՝ ըստ նախնական պայմանավորվածությունների, որոնց մասին նաեւ հնչել են հանրային պաշտոնական հայտարարություններ: ՌԴ կառավարությանը կից գործող Ֆինանսական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր Ալեքսանդր Շատիլովի կարծիքով, սպասվող գագաթնաժողովը խոստանում է լինել բավականին լարված:

Ռուսական Международная жизнь պարբերականի հետ զրույցում նա ասել է, որ քննարկվելու են բավականին շատ խճճված ու կնճռոտ հարցեր, որոնք վերաբերելու են թե՛ դաշինքի ներքին կյանքին, թե՛ արտաքին հարցերին: «Հասկանալի է, որ հիմնական օրակարգային հարցը լինելու է Ուկրաինային ցուցաբերվելիք աջակցությունը, քանի որ ՆԱՏՕ-ն, փաստացի, գրեթե ողջ կազմով լծված է Ուկրաինային օգնելուն: Նույնիսկ Միացյալ Նահանգներն է հիմա միացել Զելենսկու վարչակարգի աջակիցներին, եւ կարծում եմ, որ գագաթնաժողովի ժամանակ հիմնական հարցը լինելու է այն, թե ինչպես պետք է կանգնեցնել Ռուսաստանին՝ Ուկրաինայում»: Փորձագետը նշում է, որ անպայման կքննարկվի այն հարցը, թե արդյոք կարո՞ղ է ուկրաինական ճգնաժամը վերածվել Ռուսաստան-ՆԱՏՕ գլոբալ բախման, եւ եթե այո, ապա ով է մասնակցելու դրան:

«Տեսնում ենք, որ չնայած ագրեսիվ հռետորաբանությանը, եվրոպացիների մեծ մասը պատրաստ չէ Ռուսաստանի դեմ ռազմական զորակազմ հակադրելու եւ պատրաստ է միայն նյութական կամ ռազմատեխնիկական աջակցություն ցուցաբերելու»: Շատիլովն արձանագրում է, որ քչերն են իրականում ցանկանում ռեալ իրականության մեջ բախվել Ռուսաստանի հետ՝ ռազմական առումով: «Թերեւս միայն բալթիկացիներն ու լեհերը, բայց դե՝ նրանք 2014 թվականից ռազմաճակատում են: Հնարավոր է, որ փորձեն Էրդողանին էլ ներգրավել, թե արդյոք, եթե գլոբալ առճակատում սկսվի Ռուսաստանի եւ Եվրոպայի միջեւ, կմիանա՞ նա այդ առճակատմանը»: Շատիլովը նշում է, որ Էրդողանը դեռ չեզոք ու ճկուն կեցվածք է պահում, սակայն հնարավոր է, որ նրա նկատմամբ նույնպես Թրամփը ճնշում գործադրի, քանի որ շատ կարեւոր է, որ Թուրքիան էլ ներգրավվի այդ գլոբալ բախման մեջ: Հատկապես որ թուրքական բանակն աշխարհի լավագույն բանակներից է, եւ, ըստ փորձագետների, դժվար թե «եվրոպական խաժամուժը» հրաժարվի այդ բանակը հանուն իրեն ծառայեցնելու մտքից:

Ներքին խնդիրների հետ կապված, Շատիլովը նշել է, որ հիմնական խնդիրը կապված է լինելու այն բանի հետ, թե ով որքան է «գումար գցելու ընդհանուր գանձանակի մեջ»: Թրամփն ամեն կերպ կթիրախավորի մյուսներին՝ ժլատության եւ դաշինքի ընդհանուր գանձանակի մեջ ավել գումար գցելու ցանկության բացակայության համար: Առաջիկայում Թրամփը ներամերիկյան հարթությունում կարեւոր իրադարձություն ունի՝ Կոնգրեսի միջանկյալ ընտրությունները, եւ շատ կարեւոր է, որ կարողանա ստիպել, որ եվրոպացիներն իրենց գրպանները լայն բացեն դաշինքի գանձանակի համար: Եթե դա հաջողվի, ապա Թրամփը դա անպայման նախընտրական արշավում կմատուցի որպես իր հաղթանակներից մեկը՝ ամփոփել է ռուս քաղաքագետը:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՆՅԱՐԴԵՐԻՍ, ԿՅԱՆՔԻՍ ՀԱՇՎԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՄ ԻՆՉ-ՈՐ ՄԻ ԲԱՆ ԱՆԵԼ

Հարցազրույց դերասանուհի **Մարջան Ավետիսյանի** հետ

- Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Ուժեղ Հայաստան» դաշինքները հայտարարել են, որ վերցնելու են պատգամավորական մանդատները եւ գնալու են խորհրդարան, թեպետ պնդում են, որ դրանով իրենց պայքարը չի ավարտվելու: Դուք մշտապես պայքարել եք արդարության համար, ընդդիմադիր հայացքներ ունեք, մտահոգ եք երկրում տեղի ունեցող պրոցեսներով: Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ պետք է անի ընդդիմությունը՝ վերցնի՞, թե՞ չվերցնի մանդատները:

- Անկեղծ ասած, դժվարանում եմ հստակ ասել, թե այս փուլում որն է ճիշտը, ինչու, որովհետեւ ընդդիմադիր ուժերը խաղաքարտերը չեն բացում մեզ համար, որպեսզի հասկանանք, թե ինչ են ծրագրում անել առաջիկայում: Անկեղծ ասած, չգիտեմ՝ խորհրդարան գնա՞լն է ավելի նպաստավոր, թե՞ չգնալը, սակայն ինձ թվում է, որ իշխանությանը մենակ թողնելով խորհրդարանում՝ առիթ կստեղծվի, որպեսզի իրենց իրական դեմքը ցույց տան: Երբ դիմացդ չկա ախոյան, ավելի հեշտ է դառնում ամեն ինչ: Թեպետ իշխանությունն այնքան է վնասել մեզ՝ բոլորիս, իր քայլերով ու գործողություններով, որ դժվար թե սրանից այն կողմ կարողանա ինչ-որ բան անել: Էլ ի՞նչ պետք է անեն, որ զարմանանք, չկա այլեւս զարմանալու տեղ:

- Բայց այդպես էլ կա մտավախություն՝ հարեւան Վրաստանի օրինակով, որ իշխանությունները կարող են ավելի անկառավարելի ու լկտի դառնալ, կարող են հանգիստ շարունակել իրենց սեւ գործը: Այս առումով չունե՞ք նման մտավախություն:

- Եթե ընդդիմությունը ոչինչ չանի, բնականաբար, իշխանությունն ավելի կլկտիանա, բայց եթե գործողություններ լինեն, ես կարծում եմ, որ իշխանությանը մենակ թողնելը կարող է դրական ազդեցություն ունենալ: Բայց եթե վերցնելու են մանդատները, եւ ունենալու ենք այն, ինչ ունեինք հինգ տարի շարունակ, չեմ կարծում, որ դա լավ տարբերակ է: Միեւնույն է՝ այս իշխանությունը թույլ չի տալիս ընդդիմությանը՝ օրենքներ անցկացնել, թույլ չի տալիս կարծիք հայտնել, թույլ չի տալիս գործել ի շահ պետության, հետեւաբար, լավ չեմ հասկանում, թե ուղղակի մանդատ վերցնելն ինչի համար է:

- Բազմաթիվ ընտրախախտումներ արձանագրվեցին, ավելի քան 60 հազար քաղաքացու քվե զրոյացրին, որպեսզի Փաշինյանը մի քանի մանդատ ավել ունենա: Ի՞նչ եք կարծում՝ այն իրականությունը, որում ապրում ենք, որեւէ աղերս ունի՞ ժողովրդավարության եւ բարձր արժեքների հետ:

- Անշուշտ, այս ամենը չի կարող ժողովրդավարության հետ կապ ունենալ, բայց «ժողովրդավար» Եվրոպան աչք փակեց ամեն ինչի վրա եւ ասաց՝ ամեն ինչ օքեյ է: Նրանց պետք է, որ Հայաստանն անտերության մատնվի, մենք եվրոպացիներին չենք հետաքրքրում: Բոլորս ականատես ենք լինում, թե ինչ է կատարվում հայ գյուղացու հետ: Եթե Ռուսաստանը փակեց իր շուկան մեր առաջ, մենք դեռ այս ամենի պտուղները նոր ենք տեսնելու:

- Ստեղծագործող մարդու համար նման իրավիճակում դժվար չէ՞ աշխատելը: Կարողանո՞ւմ եք այս պայմաններում կենտրոնանալ թատրոնի եւ կինոյի վրա:

- Ամեն դեպքում, մենք տեսնում ենք, որ մեծամասնության վրա չի ազդում այս ամենը: Խոսքը մշակութային գործիչների մասին է: Եթե լռում ես, ուրեմն ոչինչ էլ քեզ վրա չի ազդում. ես այդպես եմ կարծում: Ձեւը գտել են՝ լռել, ու վերջ, թեպետ ես ոչ մեկին չեմ մեղադրում: Մարդիկ հոգեպես ու ֆիզիկապես չեն դիմանում այս իրականությանը: Ինչ վերաբերում է ինձ, ապա բարդ է այս պայմաններում աշխատելը, սակայն նյարդերիս, կյանքիս հաշվին փորձում եմ ինչ-որ մի բան անել, որքան որ հնարավոր է:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱԼ ՎԱՃԱՌԵԼ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հրապարակի» զրուցակիցը վրացի քաղաքագետ ***Գելա Վասաձեն*** *է:*

Արա ԱԼՈՅԱՆ

- Օրերս Երեւան եւ Բաքու այցելեց Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը: Հայաստանում, ի դեպ, այս տարի դա նրա երկրորդ այցն էր՝ Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովից հետո: Երկու մայրաքաղաքներում էլ կողմերը, ինչպես ասում են, «միմյանց սեր խոստովանեցին եւ հավատարմության երդումներ տվեցին»: Ինչպե՞ս է այս ամենին նայում ԵՄ-ի հետ հարաբերություններն առկախած Վրաստանը, մի՞թե Հին աշխարհամասի հետ կապերը վերականգնելու մոտալուտ շանս չկա:

- Ինչպես է Վրաստանը նայում ԵՄ-ի մերձեցմանը Հայաստանի եւ Ադրբեջանի հետ. առաջնորդության կորստի անհարմար զգացողությամբ: Մինչեւ վերջերս Վրաստանը Հարավային Կովկասի գլխավոր եվրոպական նախագիծն էր: Աժմ Ուրսուլա ֆոն դեր Լայենը մեկնում է Երեւան եւ Բաքու, իսկ Բրյուսելի հարաբերությունները Թբիլիսիի հետ գործնականում սառեցված են: Սա շատ լուրջ քաղաքական ձախողում է: Բայց եկեք, առանց սիրո մասին խոսակցությունների՝ միջազգային քաղաքականության մեջ սեր չկա: Եվրոպան աշխատում է այնտեղ, որտեղ տեսնում է հետաքրքրություն եւ համաձայնության հասնելու հնարավորություն: Հարավային Կովկասն այսօր ավելի կարեւոր է դառնում՝ էներգետիկա, տրանսպորտ, ինչպես նաեւ՝ Կենտրոնական Ասիա, Իրան, Սեւ ծով: Եվ Բրյուսելը պարզապես գնում է այնտեղ, որտեղ դռները բացվում են: Վրաստանն ինքն է փակել այդ դռները: Մեր իշխանությունների համար այն երաշխիքը, որ Վրաստանում չի լինի կառավարությանը մարտահրավեր նետող ընդդիմություն, ավելի կարեւոր է դարձել, քան եվրոպական ընտրությունը: Հնարավո՞ր է վերականգնել հարաբերությունները: Այո: Բայց դրան հասնելու համար բավարար չէ ամեն օր կրկնել, որ Վրաստանը եվրոպական երկիր է: Եվրոպան այսօր նայում է ոչ թե հռչակագրերին, այլ՝ կառավարության գործողություններին:

- Իսկ ի՞նչ են անում Վրաստանի եվրոպամետ ուժերը՝ այդ գործընթացն արագացնելու եւ ԵՄ-ի հետ հարաբերությունները «վերականգնելու» համար, որքան էլ գործող իշխանությունները «կարմիր գծեր» են նշել ԵՄ հետ հարաբերվելիս՝ առնվազն մինչեւ 2028 թվականը:

- Անկեղծ ասած, մինչ այժմ՝ շատ ավելի քիչ, քան պետք է: Ավելին, վրացական ընդդիմությունը նույնիսկ չգիտի, թե ինչպես մարդկանց փողոց դուրս բերել, առավել եւս՝ բողոքի ցույցերը քաղաքական գործողությունների վերածել: Սա հատկապես տխուր է, քանի որ Վրաստանում կա եվրոպական ապագայի հսկայական հասարակական պահանջ: Սակայն այս պահանջի առկայությունը դեռ չի նշանակում, որ կա այն իրականացնելու ընդունակ քաղաքական ուժ: ԵՄ դրոշները լավ են: «Իվանիշվիլին պետք է հեռանա» կարգախոսը նույնպես հասկանալի է: Բայց պետությունը չի կարող կառուցվել դրոշների եւ մեկ կարգախոսի վրա: Ենթադրենք՝ Իվանիշվիլին վաղը հեռանում է: Ո՞վ է կառավարում երկիրը հաջորդ օրը: Ի՞նչ տնտեսական ծրագիր կա: Իսկ դատարանն՞ը: Իսկ ինստիտուտն՞ը: Ինչպե՞ս կարող ենք վերականգնել հարաբերությունները ԵՄ-ի հետ: Ինչպե՞ս կարող ենք խուսափել իշխանափոխությունը քաղաքական վրեժխնդրության եւս մեկ փուլի վերածելուց: Վրացական ընդդիմությունը դեռեւս հանրությանը համոզիչ պատասխան չի տվել այս հարցերին:

- Գաղտնիք չէ, որ Հայաստանն ու Ադրբեջանն առեւտրային կապեր են սկսել, որի համար կարեւոր տարանցիկ երթուղի է Վրաստանը: Ձեր երկրում «հաշվե՞լ» են Երեւանի ու Բաքվի այս գործընկերությունից ստացվելիք Թբիլիսիի սեփական եկամուտը եւ որքանո՞վ են կարեւորում այդ կապերի արդյունավետությունը համընդհանուր՝ տարածաշրջանային իմաստով:

- Չեմ ուզում թվեր հորինել: Ես չունեմ ստուգված հաշվարկ այն մասին, թե որքան է Վրաստանը վաստակել այս տարանցումից: Սակայն տեղի ունեցողի ռազմավարական նշանակությունը հսկայական է: Եթե Հայաստանն ու Ադրբեջանը իսկապես սկսեն տնտեսական համագործակցություն, նույնիսկ շատ սահմանափակ ձեւաչափով, Հարավային Կովկասի տրամաբանությունը կփոխվի: Տասնամյակներ շարունակ տարածաշրջանն ապրել է փակ սահմանների հետեւում: Հիմա ի հայտ է գալիս հաղորդակցությունների հաշվին ապրելու հնարավորությունը: Պետք է հասկանանք. Վրաստանի համար Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաղորդակցությունների բացումը սպառնալիք չէ: Այն ներկայացնում է հսկայական լրացուցիչ հնարավորություններ: Մենք պարզապես պետք է պատրաստ լինենք՝ օգտվելու այդ հնարավորություններից: Ես չեմ ասի, որ ոչինչ չի արվում: Արվում է: Զարգանում են ենթակառուցվածքները, եւ կա տարանցման ու նոր տարածաշրջանային կապերի կարեւորության ըմբռնում: Արդյո՞ք սա բավարար է: Ոչ, դա բավարար չէ: Որովհետեւ այժմ այլեւս միայն A եւ B կետերի միջեւ երթուղի լինելու հարց չէ: Հարավային Կովկասը պետք է դառնա նոր Տրանսկասպյան տրանսպորտային միջանցքի լոգիստիկ, ֆինանսական եւ ծառայությունների կենտրոնը: Աշխարհագրությունն ինքն իրենով գումար չի բերում: Դեռ պետք է կարողանալ վաճառել աշխարհագրությունը:

- Հարավային Կովկասի մասով՝ վերջերս Մոսկվան ազդակներ ուղարկեց 3+3 տարածաշրջանային ձեւաչափի անհապաղ վերագործարկման անհրաժեշտության մասին: Վրաստանի դիրքորոշումը հայտնի է. բոյկոտում է՝ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի մասով ՌԴ-ի հետ ունեցած սկզբունքային տարաձայնությունների պատճառով: Այդուհանդերձ, ԵՄ-ից, ԱՄՆ-ից, 3+3 հարթակից փաստացի մեկուսանալով, մտավախություն չկա՞, որ Վրաստանը ոչինչ չի շահում:

- Ռուսաստանն օկուպացրել է Աբխազիան եւ, այսպես կոչված, Հարավային Օսիան: Հետեւաբար, Վրաստանը չի կարող մասնակցել «3+3» ձեւաչափին: Իմ կարծիքով, այստեղ ընդհանրապես որեւէ քննարկում չպետք է լինի: Ավելին, այսօր այս ձեւաչափը թունավոր է ոչ միայն Վրաստանի համար: Կարծում եմ՝ եւ Բաքուն, եւ Երեւանը լավ գիտակցում են այն ռիսկերը, որոնք ներկայացնում է այն հարթակը, որտեղ Ռուսաստանը եւ Իրանը փորձում են պահպանել տարածաշրջանային ազդեցության հին ճարտարապետությունն այն ժամանակ, երբ տարածաշրջանն ինքնին արագ փոխվում է: Հետեւաբար, Վրաստանի խնդիրն այն չէ, որ նա չի մասնակցում «3+3»-ին: Նա չպետք է մասնակցի:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 7.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՄԻԳ-ԻՑ ԲՌՆԱԳԱՆՁԵԼ 4 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«Էյչ դի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լ. Վիրաբյանը 2025 թ. հունվարի 30-ին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ ՀՄ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Դիմելով դատարան՝ հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ հայցվորի եւ պատասխանողի (նաեւ պահատու) միջեւ 2021թ. օգոստոսի 26-ին կնքվել է անհատույց պահատվության պայմանագիր: Համաձայն պայմանագրի 1.1 կետի՝ պահառուն պարտավորվում է պահել պահատուի կողմից քննիչի 2021թ. օգոստոսի 26-ի որոշմամբ հիմնարկին հանձնված 95 տոննա (1900 պարկ) օրգանական պարարտանյութ՝ առկա վիճակով, եւ վերադարձնել դրանք պահպանված վիճակում, հաշվի առնելով բնականոն մաշվածությունը: Պայմանագրի 2.2.2. կետի համաձայն՝ պահատուն պարտավոր է պահատվության ժամկետը լրանալիս հետ վերցնել ի պահ հանձնված ապրանքները: Պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ ապրանքի պահատվության ժամկետի սկիզբ սահմանել 2021թ. օգոստոսի 26-ը, իսկ ավարտ՝ 2021թ. հոկտեմբերի 15-ը: Պայմանագրի 4.2 կետի համաձայն՝ սահմանված վերջնաժամկետի, ինչպես նաեւ սահմանված ժամկետում պահեստից չբեռնափոխադրելու դեպքում գանձվում է տույժ՝ պահեստավորման 0.1 տոկոսի չափով՝ վերջնաժամկետին հաջորդող յուրաքանչյուր 1 օրվա համար:

Ըստ հարկային հաշիվ-ապրանքագրի՝ ապրանքի ընդհանուր արժեքը կազմում է 3 մլն 705 հազար դրամ: Պահեստավորվել է 1900 պարկ, յուրաքանչյուր պարկում՝ 50 կգ պարարտանյութ, 1 տոննայի արժեքը՝ 39 հազար դրամ, 1 պարկի արժեքը՝ 1950 դրամ: Ընդհանուր պահեստավորված ապրանքի արժեքի 0,1%-ը համարժեք է 3.705 դրամին: Անհատույց պահատվության պայմանագրի վերջնաժամկետը 2021թ. հոկտեմբերի 15-ն է, 95 տ (1900 պարկ) պահեստավորված ապրանքի տեղափոխումը ՇՄՆ ԲԾԻԳ ՊՀ-ի կողմից սկսել է իրականացվել 2023թ. մայիսի 9-ից: Հայցվորը վերոգրյալի հիման վրա խնդրել է պատասխանողից՝ հօգուտ հայցվորի բռնագանձել 3 մլն 962 հազար 330 դրամ, որից՝ 2մլն 140 հազար 80 դրամը՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, 1 մլն 27 հազար 253 դրամը՝ որպես քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով սահմանված տոկոս, 700 հազար դրամը՝ փաստաբանի վարձատրություն, 95 հազար դրամը՝ նախապես վճարված պետական տուրք:

Երեւանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թ. հունվարի 31-ին հայցադիմումը վարույթ է ընդունել: Պատասխանողը 2025 թ. մարտի 24-ին ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն: Դատավոր Տ. Գրիգորյանը հունիսի 16-ի վճռով հայցը մերժել է՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով: Վճռի դեմ հայցվորի ներկայացուցիչ Լ. Վիրաբյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2026 թ. մարտի 11-ին որոշել է Վիրաբյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարել, այդ գործով Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանել եւ գործն ուղարկել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան՝ ամբողջ ծավալով ըստ էության քննելու: Ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի՝ հունիսի 15-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Վարդուհի Պապիկյանը քաղգործն ընդունել է վարույթ եւ նշանակել է դատական նիստ՝ 2026 թ. հուլիսի 15-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am